


ՍԱՐԱԲԵՆ

ՄԵՏԻ
ԶԱՅՆՈՎ



ՍՈՒՇՏԱԿԱՆ ԳՐԱՆ



Հովտեֆրան
Աստուծոյն
Տժ ուղղութեամբ
30 մեջքեր

89199

U-25

ՍԱՐՄԵՆ

ՍՈՒԳԱՍԻ Է 1961 թ.

ՍՐՏԻ ՁԱՅՆՈՎ



41004
#29447

1947

ՍՈՒԳԱՍԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆ

САРМЕН
С Т И Х И
(На армянском языке)
СОВЕТСКИЙ ПИСАТЕЛЬ
Ереван—1947 г.

ԵՐԳ ՓԱՌԻՔԻ ՈՒ ՅՆԾՈՒԹՅԱՆ



Հ Ո Վ Տ Ե Մ Բ Ե Ր

Իմ հայրենիք, դու կենսատու երջանկության,
Փարոսների, կրակների անմար օջախ,
Սահման չկա ժողովրդիս ուրախության,
Ամենուրեք՝ կյանքի վերելք, ծափ ու ծիծաղ:

Ազատության գովքն ենք երգում միաբերան
Ու պայքարով խոյանում ենք զեպի կատար.
Օ՛, առանց քեզ, ով արշալույս հոկտեմբերյան,
Այսքան լույսեր, այսքան հույզեր մեզ ով կտար:

Եվ ահա այս համասփյուռ ցնծության մեջ.
Հզորության, հերոսության խրախճանքին,
Ես, զավակդ, երգում եմ հաղթ, ցնծում անվերջ
Ու երգերն իմ ձոնում եմ քո անմահ փառքին:

Ն Վ Ե Ր

— Ո՛վ Աբաղած, հալարա ու զեհ,
Գնում եմ ես Կրեմլը վառ,
Ի՞նչ ես տալիս տանեմ նվեր
Մեր ցնծության, մեր հոր համար:

— Իմ լանջերին անվերջ հնչող
Նրջանկության երգ ու տաղից
Փնջեր երգեր արեաշող,—
Ահա ընծաս երախտալից:

— Ո՛վ Սեանա գեղեցիկ լիճ,
Գնում եմ ես Կրեմլը վառ,
Ի՞նչ ես տալիս քո գանձերից
Առնեմ-տանեմ մեր հոր համար:

— Իմ ջրերից ծնվող լույսի
Շողշողացող շուշաններից
Դու անթառամ մի փունջ հյուսիւր,
Սրտի նվեր տար ինձանից:

— Սարեր, ձորեր, հովքեր, հովեր
Ծաղկածիծաղ Հայաստանի,
Ասե՛ք՝ սիրտըս առած թևեր՝
Ձեզանից ինչ առնի-տանի:

— Հազար տարվա կյանք ու եռանդ
Կը ցանկանանք Արև-մարդուն,
Նա զարնանով է լցրել արգ
Ամեն մի սիրտ, ամեն մի տուն:

— Իմ հայրենի ժիր մանուկներ,
Գնում եմ ես Կրեմլը վառ,
Ի՞նչ եք տալիս տանեմ նվեր
Հավերժական մարդու համար:

— Մեր սիրտը տալը, սրտից արդար
Ուրիշ ի՞նչ կա, պոետ ընկեր,
Մեկ էլ ինչքան կուգես առ տար
Ծիծաղ, ցնծում, ժպիտ, երգեր:

— Ժողովուրդ իմ, Արեւի մոտ
Պատվերակ է դնում որդիդ,
Հոգին լցված հույզերով հորդ՝
Ահա գիմում է քո որդիդ:

Բո բերքերից, քո մեծ սրտի
Գանձաբանից բաղմադարյան,
Ի՞նչ ես տալիս, որ քո որդին,
Որպես նվեր տանի նրան:

— Օ՛, մոր համար իր զավակից
Էլ ավելի ի՞նչ կա անգին,
Դու ինքդ քեզ տալ ինձանից
Որպես նվեր Արեգակին:

Բայց դնա դու, որպես հերոս,
Հերոսափառ Գրեմլը վառ,
Այն ժամանակ, իմ աչքի լույս,
Քեզ կժպտա Արեւի անմար:

Հ Ա Յ Ր Ե Ն Ի Ք

Անցած դարերին հայացքս հառած՝ նայում եմ հեռուն,
Մեր ժողովրդի ուրապտույտ մեծ ճանապարհին,
Արարատի պես հավիտենական ու մտախոհուն՝
Հառնում են իմ դեմ մեր սլապերը հին:

Ահա սարից-սար, աշխարհից-աշխարհ՝ թափառ, դեգերուն,
Ուրարտու երկրի դարնան գունագեղ արևածագին՝
Ենում է իմ դեմ մեր նախահայրը՝ շանթը աչքերում,
Լիշտապիտրծան աղեղը ձեռքին:

Որպես փառապանծ դուցազուն կանգնած Սիփանա լանջին՝
Դյութված, կախարդված դիտում է ծփուն ծովը Բդնույայ,
Առատ ըմպում է անկախ վայրկյանի հրճվաճքն առաջին,
Զյունոտ լեռների կախարդանքն անտնց:

Թողած արևատ երկիրն արգավանդ, հողը հայրական,
Անսանձ տարերքի զարկին մատնելով առն ու ընտանիք,
Նեառհարելով բռնակալ Բելի սիրտը զիվակամ՝
Որոնում է նա ազատ հայրենիք:

Թշնամու գլխին, որպես մահաբեր, փոթորկածին շանթ
Ահեղ իջնում է հայրենապաշտպան թուրը Վարդանի,
Որ իր արյան մեջ տապալկի անվերջ բռնապետը ժանտ,
Ու ազատ շնչի հողն Հայաստանի:

Տեսնում եմ՝ հեծած Քուռկիկ Ջալալին, ձեռքին կայծակ-թուր,
Կռիվ է գնում Դավիթը ընդդեմ Մարա Մելիքի,
Զարկում է, զարկվում Սասնա կորճունը՝ հզոր, քաջակուս՝
Հանուն հարազատ իր հայրենիքի:

Մեռնում է Դավիթ՝ սուրբ հայրենիքի կարոտն իր սրտում,
Եվ այդ կարոտը անցնում է անվերջ սերնդից-սերունդ,
Ու սեբունդներից, որպես անմարում, անմահ սրբություն՝
Փառանդում է մի աժբողջ ժողովուրդ:

Մաճկալը լացող հորովելով է դաշտերն ակոսում
Ապառաժի պես մեջքին նստել է օտարը դժնի,
Հնձվաբլի աչքից ոսկի հասկերին արցունք է հոսում,—
Հայրենիք, ազատ հայրենիք չունի:

Պանդուխտն հյուժովում է օտարութեան մեջ գիշեր ու ցերեկ,
Կարոտով դիմում երկնքով անցնող ամեն թռչունին,
Հողու հույզերից հորինում է նա աղեկառւր երգ,
Հայրենիք, ազատ հայրենիք չունի:

Եվ բազմաքանքար մեր ժողովուրդը դարեր անդադրում
Մի երազ ունի՝ ամենից շքեղ, վառ ու գեղեցիկ,
Այս արևի տակ, արևափափազ անձիւր աշխարհում
Ունենալ մի շէն, ազատ հայրենիք:

Ու գալիս էին, անվերջ հաջորդում սերունդ սերնդին,
Բայց անկատար էր մնում երազն այդ՝ այրող ու անշեջ,
Եվ աշխարհում լույս առկուն, անկոտրում մեր ժողովրդին
Հայրենիք ավեց Հոկտեմբերը մեծ:

Մեր սիրտը թնդաց, մեր կյանքը դարձավ խորն ու խմաստուն,
Օվկիանոս կտրեց մեր հույսի, լույսի լճակը փոքրիկ,
Ողբի ու ողբի երկիրը դարձավ մի հարսանքատուն,
Ծնվեց մի ազատ, անպարտ հայրենիք:

ԵՐԳ ՓԱՌՔԻ ԵՎ ՅՆՄՈՒԹՅԱՆ

Իմ հայրենի ոստանում, Մասիսներին հանդիման,
Մեր լեռներում, ձորերում հպարտությամբ անսահման՝
Իր փառահեղ երազի մարմնավորումն է տոնում
Հայոց աշխարհը համայն:

Գանգուրներին՝ մայիսյան ծաղիկներին ծիածան,
Վարդակարմիր շուրթերին՝ հայոց երգեր քաղցրաձայն,
Ավյուռնի սանձն արձակած՝ կաքավում են նրբորեն
Աղջիկները ոսկեծամ:

Ալիծածան մետաքսի ճաճանչներով ողողված՝
Արեգակի աչքերում վառած կարոտ ու նախանձ՝
Ավանդական շուրջալսին տալիս են վեհ պերճություն
Հարսները մեր ամոթխած:

Հաղթանակով տուն դարձած դուցազուհիներն անհամար,
Հայոց փառքի ջահը բորբ պահած բարձր և անմար,
Քո կենացն են դառարկում բաժակները խնդության,
Հայրենիք իմ դիցամայր:

Շքեղ գլուխն զուգել են շաքավանները լույսի,
Մասիսն այնպես է նայում, կարծես հիմա պիտ խոսի,
Արբած անուշ հրճվանքից՝ ծալի են տալիս անդադար
Ալիքները Արաքսի:

Հանուն լույսի մաքառեց մեր դպրության արարիչ,
Մեր քանքարի գետն անհուն՝ եկած անհուն դարերից,
Մեր կարկաչուն բարբառի ազատարարն առաջին՝
Մեր Մաշտոցը մաքրաջինջ:

Գալիքի շենքն են կերտում շինարարները բազում,
Գեղգեղում է ամենուր հայ քնարը, հայ լեզուն,
Եվ դարերին ընդառաջ՝ բարձրանում է նորակերտ
Ակադեմիան Հայկազուն:

Սիրտը տված կենսաովեւ հայոց գինու կրակին՝
Զահել ու ծեր գիրկ-գրկի՝ համբուրվում են սրտագին,
Խինդի արցունք է տեղում, հանց տեղում էր մարգարիտ
Արտաշեսի հարսանքին:

Կանգնած հայոց ոստանում, պատվանդանի քարերին,
Սրտում՝ հույզեր երկնաշող, հայացքը՝ մեր լեռներին,
Աչքից ժպիտան անպակաս՝ մեր ցնծությունն է զլուում
Հավերժությունը՝ Լենին:

Որպես անդին սրտակից եկել է մեր խնջուքին,
Մեղ հետ ցնծում է անվերջ, բաժակ դարկում բաժակին,
Մեր փառքերի ակն-աղբյուր, մեր փրկարարն իմաստուն,
Մարդկության հույսն ու հոգին:

Խուլ հողմերից կուացել, բայց միշտ կանգնել վերստին
Արևին է ողջունել նախրական մեր բարդին.
Եվ արդ, իմ մայր Հայաստան, երջանկությունը անգամ
Թող նախանձի քո բախտին:

Ե Ր Ե Վ Ա Ն

Սիրում եմ քեզ, մշտաժպիտ իմ Երևան,
 Գրկումդ հյուսվեց հեքիաթն իմ խենթ ջահելության,
 Ծանոթ եմ քո ամեն ծաղկին, ամեն քարին,
 Քեզ հետ այնպես սրտակից եմ ու մտերիմ:
 Սիրում եմ ես արշալույսներդ գեղեցիկ,
 Հովից նազող քո բարդիները սլացիկ,
 Առատարույր վարդերը քո երանավետ,
 Որ խոսում են Հրազդանի ջրերի հետ:

Սիրում եմ ես արևը քո ամենազոր
 Ու շողերիդ սրով կիզված նուռը բոսոր,
 Հարբեցուցիչ հնձաններիդ ծոփն ալեծուփ,
 Քո ջերմ ծոցի ամեն մի ծիլ, ամեն մի թուփ:
 Երբ աղջիկներդ նրբերանդ շորեր հագած՝
 Լուսավարար Արուսյանով իջնում են ցած,
 Աշխարհը ինձ թվում է մի անանց կրազ,
 Ծուրջըս՝ անթիվ սևազանգուր հավերժաճարս:

Սիրում եմ ես անմահական ջուրդ անարատ,
 Հայացքիդ մեջ անդրադարձած սարն Արարատ,
 Իմ հայրենի նորաշեն տունն շքնադատես,
 Շքեզ ես դու ինչպես դարձան ծաղկահանդես:
 Եթե այսօրդ է այսքան ջինջ ու փառավոր,
 Ի՞նչ կլինի անկրկնելի քո վաղը նոր,
 Սիրում եմ ես որդու սիրով անապական
 Ծիածանվող հեքիաթային քո ապագան:

Յնժան, ծաղկիր, հայոց փառքի քաղաքամայր,
 Արևը քո թող միշտ վառվի բոլր ու անմար:

ԴՈՒ ԱՆՀՈԳ ԽԱՂԱ

Այսքան արագ երբ հասա կյանքիս կես-օրին,
Ակնթարթի պես թռավ ամեն մի տառին:

Ահա իմ դեմ նստել է մի պայծառ մանուկ՝
Իր խաղի մեջ խորատույզ՝ անհոգ, անաղմուկ:

Ապարանքներ է կերտում մանրիկ ավազից,
Աչքի տա ով մերթ ընդ մերթ շափչփում է ինձ:

Երկար նայում եմ նրան ու ինձ եմ հիշում
Անցյալացած մի հեռու, հեռու մշուշում:

Եվ հայրական ձեռքերով գրկում եմ մանկան,
Կարոտագին քնքշությամբ դնում իմ ծնկան:

Համբուրում եմ գլուխը, ձեռքերը ցեխոտ,
Իսկ նա նայում է այնպես սառնորեն ու խորթ:

Հանկարծ, որպես շվարած վայրի եղջերու,
Ինձնից պոկվում է թափուկ ու փախչում հեռու:

Խոցող ցավով եմ նայում այս մանկան վրա,
Ինչո՞ւ կիսատ թողի ես պալատը նրա:

Ինչո՞ւ իմ կոշտ մատներով ու քմայքով սին
Դիպա նրա մանկական շքեղ երազին:

Վերադարձի՛ր, իմ անբիծ, անուշ երեխա,
Թող աշխարհի ցամփն ինձ տան, դու անհոգ խաղա:

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

Կա մի երկիր, ուր լեռները բարձրագագաթ
Համբուրվում են երկնի լուսեղ լազուրի հետ,
Ուր ձորերը և հովիտները խնդառատ
Ունեն ակունք, ունեն ծաղկունք երանավետ,
Ուր աղբյուրներն ամեն կողմից քեզ ձայն կտան.
— Ե՛կ, վայելիր այս բաժակը անմահության:

Ուր երգելով ցած են իջնում լեռան լանջից
Առու, առվակ ու գետակները սրընթաց,
Ուր անդունդի գլխին կախված հսկա ժայռից
Քեզ են նայում արջն ահավոր ու վայրի այծ,
Ուր հոտերը բեռնված ճերմակ ոսկով հորդուն՝
Երեկոյան հովերի հետ դառնում են առն:

Ուր վրնջում են նժույգները սանձարձակ՝
Մարդագետնի կանաչներում ծովածավալ,
Ուր, երբ բացվում է վաղորդյան արևածագ՝
Շողքի հեղեղ է սարերից թավալվում վար,
Ուր տեսնում է սիգապանծ սարը ձյունաթագ՝
Խաղողն է լուռ հասունանում իր ոտքի սակ:

Ուր լեռների գահին բազմած լիճը՝ Սևան,
Սիրակարոտ նայում է սեզ Արագածին,
Ուր տատիկը հեքիաթով է շոյում թոռան,
Երբ մոլեգնում է ձմեռը փոթորկածին,
Ուր մրգերի ծանրությունից ճղակոտոր՝
Ծառերը հողն են համբուրում սիրատուհոր:

Ուր գինիով լիփ-լիցուն է ամեն հնձան,
Մառանները պայթում են բյուր բարիքներից,
Հորձանքում է հասկերի ծովն ալեծածան,
Երջանեկության ծուխն է ելնում երգիկներից,
Ուր նորաթուխ հացի բույրը քեզ կախարդում,
Հանց հյուրասեր մի հաճապեա՝ կանչում է առն:

Ուր դետնափոր հյուղերի տեղ երգում են հար
նոր ավաններ, գործարաններ, գյուղեր ծաղկուն,
Ուր գիշերվա խավարի մեջ, ինչպես գոհար,
Էլեկտրական արևներն են մեկից ծագում,
Ուր Կոմիտասն է դաշլալում կախարդական,
Ներդի դրախտ է կառուցել Լոռվա արքան:

Ուր իր սիրած սարերի պես մարդն է աղատ,
Աղատ մարդն է կերտում կյանքը արեգական,
Սրբության պես սիրում է իր հողն հարազատ,
Իր օջախը, իր հայրենիքն ու ապագան.
Եվ բերդի պես պաշտպան է իր ազատության,
Հավերժ է նա, նրա անունը՝ Հայաստան:

ԽՆԶՈՒՅՔԻ ԵՐԳ

Սեղանն է առատ,
Դիմացն՝ Արարատ,
Հնչում են երգեր
Ուրախ ու գլխաթի.

Լցրեք, ընկերներ,
Բաժակները լի,
Թող հայոց գինին
Մեզ անուշ լինի:

Փառք տանք մայր հողին,
Արևի շողին,
Գինի պարգևող
Հայոց խաղողին.

Լցրեք, ընկերներ,
Բաժակները լի,
Թող հայոց գինին
Մեզ անուշ լինի:

Փառք տանք նոր կյանքին,
Հողի մշակին,
Որ միշտ կանաչեն
Մեր դաշտն ու այգին.

Լցրեք, ընկերներ,
Բաժակները լի,
Թող հայոց գինին
Մեզ անուշ լինի:

Դովենք դարեդար
Աշխատանքն արդար,
Հայոց աշխարհի
Աթել պայծառ.

Լցրեք, ընկերներ,
Բաժակները լի,
Թող հայոց գինին
Մեզ անուշ լինի:

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆ

Նստել եմ հեքիաթային մի պալատում,
Վրձինի կախարդական խաղն եմ դիտում:

... Այս բազում կտալներում անմահությամբ
Շնչում է, չնչում է ողջ հայրենին...
Ահա տես, Արաբատը՝ գլխին մի ամպ,
Ամպից վեր՝ երկնածովի ջինջ հայելին,
Ահա տես, բլուրների պարը չքնաղ,
Ամեն կողմ հուշարձաններ քարաքանդակ,
Երազուն ծառախմբեր այնքան խաղաղ,
Հակիրթյա հյութեղ խաղող, վճիտ գետակ:

Ահա տես, նայիրական շուրջպար բռնած
Հարսները լաշակավոր, ավանդապահ,
Ու հեւվում՝ հերկված հանդում հպարտ կանգնած՝
Գեղջուկը ջուր է առնում՝ ձեռքին մի բան:
Հասկերի ծովն է ահա մեղմ սվավում,
Բազմալուծ գութանները վարում են հար,
Ծանրաշարժ գոմեշների հեքն է լսվում,
Եզները՝ այնքան վատուծ, այնքան նիհար:

Ահա տես, հսկա ժայռերն արեակեղ,
Աշունը՝ ոսկեհանդերձ, տխրաթախիժ,
Դարունը՝ կարծես խոսում՝ կանչում է քեզ,
Կակաչներն դուրս են պոռթկել կոկոններից:
Ահա տես, ձորերը խոր, խորհրդավոր,
Սեղ ժայռեր ու կածաններ օձազալար,
Եվ որպես տրտում ու հեղ մի ուխտավոր՝
Երգում է ճախարակը մեր միալար:

Ահա տես, այն գորգագործ գեղեցկուհուն,
Հյուսում է կյանքի, բախտի գորգը նրբին,
Մատները այնքան աշխույժ, այնքան սահուն,
Աչքերին կնախանձի գարնան արփին:

Նայի՛ր ինչ հողեջինջ է կոլխողունին,
Բամբակի ճերմակ վարդ է հավաքում նա,
Խաղողի հակինթները բռնած ձեռին՝
Ժպտում է երջանկության ժպտով անմահ:

Ահա տես, արևն ինչպես հալած ոսկի,
Ներկել է երկինք, դեռին, սար, ձոր ու արտ,
Ականջ դիր, լսում ես երգը դետակի,
Դիչերը այնքան անուշ, այնքան հանդարտ:
Տենչերի, երազների առատություն,
Բնության տեսարաններ այնքան չքնաղ,
Լույսերի հոսող-խոսող պայծառություն,
Գույների հաղարերանդ, հանճարեղ խաղ:

ԵՐԳԻ ԾՆՈՒՆԳԻՐ

Դիշեր է զով, շքեղ գեշեր,
Նստել եմ ես գետի ափին,
Սրտումս անուշ կարոտ ու սեր՝
Նայում եմ իմ կյանքի ճամփին:

Ալեկոծված, հոգեխռով՝
Հոսում է գետը վարարուն,
Եվ ալիքները երգելով՝
Գնում են հար անհայտ հեռուն:

Հմայել է գիշերն հոգիս,
Քուն չի գալիս իմ աչքերին,
Գերվել եմ ես երազանքիս,
Հին հուշերիս կախարդանքին:

Ինձ այցի են գալիս հեռվից
Իմ սրտակցի աչքերը թուլիս,
Եվ հույզերի անհուն ծովից
Ծնվում է երգը սրտաբուլիս:

Երգում եմ ես, ու իմ երգին
Ձայնակցում են առու, աղբյուր,
Աստղ ու երկինք, հող ու երկիր,
Մար ու ձորեր, գետեր փրփուր...

Եվ ինչպես մայրն հոգեգորով
Իր նորածին ընթուշ ուրդուն՝
Ես լուսաշող ճանապարհով
Իմ նոր երգը բերում եմ տուն:

44562
40045



ՅՆԾԱ՛, ԵՐԿԻ՛Ր

Յնծա՛, երկիր՝ արեւ անմար,
Շեփոր, թմբուկ հնչեք ուժգին,
Ջահել ու ծեր, մանուկ ու մայր,
Ողջուն ավեր մեր Բանակին,

Մեր Բանակին,
Մեր պարծանքին,
Մեր հաղթական
Հայրենիքին:

Մեր հողը՝ սուբբ, մեր գործն՝ արդար,
Բանակը մեր հավետ անպարտ,
Առնենք զրիչ, առնենք քնար,
Ցանկանք կյանքի անհուն հոտնդ

Մեր Բանակին,
Մեր պարծանքին,
Մեր հաղթական
Հայրենիքին:

Շողա՛, արեւ, բացվիր, գարուն,
Աղջիկ, տղա՛, հանդես եկեք,
Թող գետ զառնա խինդի առուն,
Հազար ձայնով արեւ՝ մաղթենք

Մեր Բանակին,
Մեր պարծանքին,
Մեր հաղթական
Հայրենիքին:

ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Արևի տակ դու ինձ համար նվիրական լուսե անուն,
Ինչքան քեզնից հեռանում եմ՝ քո սերն այնքան խոր է դառնում:

Ուր էլ լինեմ՝ մտերմաբար խոսում ես դու իմ հոգու հետ,
Հավերժափառ քո դուլթանքով ինձ կանչում ես, կանչում ես ետ:

Ինձ կանչում է Երևանը, քաղաքամայրը նորակերտ,
Ուր իմ կյանքի ընկերուհին ուրախ շրջում է մանկանս հետ:

Ուր Արագածն է հար նայում գերված եղբայր Արարատին,
Ուր բարձրանում է վեհորեն հայոց բախտի կանաչ բարդին:

Աղբյուր, առու, ծաղիկ ու ծիլ ծառակամար Արովյանից,
Զանգվի ձորից, մեր հին Նորքից քնքուշ ձայնով կանչում են ինձ:

Ինձ կանչում են դաշտերը մեր, լեռները մեր ոսկեմշուշ,
Ինձ կանչում է մայրըս սլառավ՝ ամեն քանից թանկ ու անուշ:

Երվինբաճիկ է Հայրենիքն իմ, հզորագոր, մեծ ու անծայր,
Նրա գրկում շողում ես դու շքեղությամբ վեհ ու սլալծառ:

ԿՈՎՈՒՄՆ ԸՆԿԱՎ

Կովումն ընկավ կտրին աղան,
Սրտից ծռբաց կարմիր արշուն,
Կաղնին ոնց մայր թերվեց վրան,
Բերջ նման լացեց առուն:

Կաղնու շուքին մի փոս փորեց
Ի՞նչ ղինակեց եղբայրն արի,
Բաջին հողե մահիճ դրեց՝
Հողին ցասման շանթերով լի:

Բամին մեղմիկ ձայնով երգեց,
Մառին, ծաղկին թաթիժ իջավ,
Եղբայրն եղբոր հողն համբուրեց,
Կայծակ կտրեց ու բարձրացավ:

Հանկարծ երզը շրթունքներին՝
Կարմիր գնդերն արագ անցան,
Գերեզմանին կանգնեց կաղնին,
Ինչպես անմահ վառքի արձան:

ՀԱՄԲՈՒՐՎՈՂ ՀԱՍԿԵՐ

Անձրիկց հետո, մի պերճ ծիածան
Կամարել է մեր հովիտը եղեմ,
Հասուն հասկերի ծովն ալեծածոն
Շուայլ մերկությամբ փովել է իմ դեմ:

Հիացքով արբած՝ համբուրում եմ ես
Առաջին հասկի վարսերը ոսկի,
Իսկ նա այնպե՛ս նուրբ, այնպե՛ս սիրակեզ
Համբույրս տալիս է մի ուրիշ հասկի:

Հասկերը հովից գգվում են իրար
Ու մեկը մեկին համբույրս ավետում,
Եվ թվում է ինձ, թե արար-աշխարհ
Լեզու է դառել, դարձել լանդություն:

Կուգեի մեկ-մեկ համբուրել սրտանց
Այս գաշտի լուրբ, բուրբ հասկերին,
Շոյե, գուրգուրել ու լսել նրանց
Մեղմիկ ծփանքի երգը մտերիմ:

ՀԱՅՈՅ ՃԱՄՓԱՆ

Մեր հուշի, մեր լույսի կրակներն անմարում,
 Մեր դիմաց՝ դալիքի շողշողուն բարձունքներ,
 Մեր հանճարն անսպառ, մեր հոգին արևուն,
 Մեր սարերն անառիկ, մեր ճամփան զեպի վեր:

Մեր ճամփան զեպի վեր,
 Դեպ դալիքն արևոտ,
 Մեր սրտերում ծաղկաբեր
 Մայիսյան առավոտ:

Մեզ ճամփին դարկեցին ոտիներ բյուրավոր,
 Խափարել ուղեցին մեր լույսի ջահն անմար,
 Բայց կանգնած է հպարտ Արագածն ալիւր,
 Եւրա ձեր կատարին՝ մեր ջահերն անհամար:

Մեր ջահերն անհամար,
 Մեր հոգու պէս խնդուն,
 Հոգմերի դեմ համառ՝
 Միշտ զվարթ, միշտ արթուն:

Մեր ձեռքին լույսերի ծաղիկներ անմարում,
 Պայքարին մեր վկա՝ Մասիսներն ալեհեր,
 Եվ նորից մեր ազատ, մեր հզոր աշխարհում
 Մենք քայլում ենք, քայլում զեպի լույս, զեպի վեր:

Դեպի լույս, զեպի վեր,
 Մենք քայլում ենք անսպառ,
 Մեր դրոշմ՝ ալ ու վեհ,
 Հաղթական ու հպարտ:

ԻՄ ՀԱՅՐԵՆԻ ԱՂՋԻԿՆԵՐԸ

Դեղեցիկ է երևանը, մեր ոտտանը հնադարյան,
 Նրան օրոր է մըմնջում գուսանահայրը՝ Հրադան,
 Դիմացը սեզ բաբձրանում է Նահապետ սարը՝ Արաբատ,
 Կողքին կանգնել է հար-հավետ Արադածը քառադադաթ,
 Դեղեցիկ են մեր բուրավետ, մեր բերքառատ այգիները,
 Բայց ամենից գեղեցիկ են իմ հայրենի աղջիկները:

Դեղեցիկ է մեր Սևանը, նրա նման կապույտ ու ջինջ,
 Նրա նման լուսե հրաշք արևի տակ չկա ոչինչ,
 Անհիշելի, անհուն հնում՝ նրա սիրուցը խելագար՝
 Հայ հսկաները լեռնացի՝ ծովի շուրջը բռնել են պար.
 Մեծ չեն դուրսում, չեն կախարդում նրա նազող ալիքները,
 Բայց ամենից գեղեցիկ են իմ հայրենի աղջիկները:

Տեսնել ես դու ծաղկած ծառեր, տեսել ես դու բացված վարդեր,
 Կարծես մեկից ցած են թափվել հաղար ու բյուր նախշուն թիթեռ,
 Ուզում ես, որ կյանքը դառնա անհատնում ու հավերժագին,
 Նստես, անվիրջ հողով նայես այդ ծաղկակերտ ծխածանին,
 Դեղեցիկ են Հայաստանի հազարերանոց ծաղիկները,
 Բայց ամենից գեղեցիկ են իմ հայրենի աղջիկները:

Անուշիկ են իմ հայրենի աղբյուրները քաղցրակարկաշ,
 Դյուխական են մեր դաշտերը, անտառները զով ու կանաչ,
 Թե չեն տեսել մե օր եկ տես այդաբացը մեր լեռներում,
 Քեզ կթվա, թե զրանից գեղեցիկ բան չիք աշխարհում,
 Դեղեցիկ են մեր արեր, մեր ձուրերը, մեր սարերը,
 Բայց ամենից գեղեցիկ են իմ հայրենի աղջիկները:

Նոճհասակ, մեջքը բարակ, աչքերք սև, աստղոտ զիշեր,
 Անտոիկ բերդ են բաբձրապան, ամեն մարդու չեն տալիս սեր,
 Բայց թե հանկարծ տիրանաս դու այդ դանձերից մեկին ու մեկին՝
 Նա քեզ կտա և՛ իր սերը, և՛ իր հուրը, և՛ իր հոգին,
 Ինչ թովիչ են հովիթներն՝ մթնում ծաղկող կրակները,
 Բայց ամենից գեղեցիկ են իմ հայրենի աղջիկները:

ԳԱՐՆԱՆ ԵՐԳ

Ծաղկել է այգին,
Ու մենք ցնծաղին
Բազմել ենք շաբթով
Կանաչի գորգին:

Հաղթել ենք մարտում,
Երզում ենք, խնդում,
Հայրենի հողին
Արև ենք մաղթում:

Ազատ ու անձայր
Մեր հայրենիքում
Նորից շինաբար
Մուրճերն են գնդում:

Հաղթել ենք մարտում,
Երզում ենք, խնդում,
Հայրենի հողին
Արև ենք մաղթում:

Վարդերն են բուրում,
Երզում է առուն,
Ի՛նչ լավ է ապրել
Ազատ աշխարհում:

Հաղթել ենք մարտում,
Երզում ենք, խնդում,
Հայրենի հողին
Արև ենք մաղթում:

ԻՆՉՈՒ ՉԵՍ ԳԱՆԻՍ ՏՈՒՆ

Նոբից գարունն է հյուր եկել
Մեր աշխարհին, հողին, մարդուն,
Իմ անմոռաց, իմ քաջ ընկեր,
Ինչո՞ւ, ինչո՞ւ չես գալիս տուն:

Գիշեր-ցերեկ ինչպես կրակ
Քո սերն այրվում է իմ սրտում,
Ո՞ւր ես հիմա, ո՞ր հողի տակ,
Ինչո՞ւ, ինչո՞ւ չես գալիս տուն:

Թե՛ ընկել ես չար զնդակից,
Եվ քո աչքերն էլ չեն ժպտում,
Գեթ երազում, իմ սրտակից,
Ինչո՞ւ, ինչո՞ւ չես գալիս տուն:

Ա.

Այս անտառում մի դաժան սով
Տարավ իմ լույս քույրիկին,
Այն օրվանից մինչև այսօր
Հին ցավ ունի իմ հոգին:

Այն սև ժամից մինչև հիմա
Դիտվոյ ինչե՛ր չեն անցել,
Բայց ես երբեք չեմ մոռանա
Իմ քույրիկին ոսկեհեր:

Նա միշտ կանգնած է իմ գլխույ,
Մեղրամոմի պես հալչում,
Պաղատում է մի պատառ հաց
Ու մեռած մորն է կանչում...

Բ.

Արդ, մեր անտառը դարձարված՝
Սոսափում է սրտադին,
Եվ ես ծաղկի գորգին նստած՝
Նայում եմ իմ դստրիկին:

Խաղում է նա ծառերի տակ,
Ծիծաղի հուրն աչքերում,
Դիտին դրած ծաղկեպսակ՝
Թիթեռներին է դերում:

Այնքան նման է իմ քրոջ
Իմ մանկիկը ցնծալի,
Կարժես լինեն երկու բոլբոջ,
Երկու տերև նույն ծառի:

Այլ է հիմա աշխարհը մեր,
Երջանկաթյունն է ծաղկում,
Բայց իմ քրոջ աչքերն անմեռ
Վառվում են հար իմ հոգում:

ՄԱՅԻՍԱՆ ԵՐԳ

Նորից մայիսը փառապանծ
Քայլում է մեր փողոցներով,
Սիրտըս կյանքի խինդով արբած՝
Ելնեմ ողջուն տամ երգերով:

Երգեմ ծովը ալեծածան,
Բոսորավառ դրոշների,
Շաղ տամ ծաղկունքը ծխածան
Հերոսների ճանապարհին:

Աշխարհն փրկող մեր Բանակի
Դովքը անեմ ինչպես զուսան,
Որ հուշարձանը մեր փառքի
Պահեց հավերժ ու անսասան:

Փառարանեմ ժողովրդոց
Եղբայրությունը հաստատուն
Եվ դարերը լուսավորող
Արեգակին մեր իմաստուն:

Այբլիմ դարնան սիրով անշեջ,
Ժպիտներով մայիսական
Ու այսօրվա աչքերի մեջ
Տեսնեմ շքեղ մեր ապագան:

Խիտ շարքերին ձուլվեմ երթամ
Ինչպես ալիքն օվկիանոսում,
Թե ցանկանա՝ հողիս էլ տամ
Հայրենիքին իմ սիրասուն:

Կ Ո Մ Ի Տ Ա Ս

Լսում եմ անա մի հոգեղմայլ,
Մի չնաշխարհիկ, մեղմիկ հղանակ,
Գուցե երգում է հեղահամբույր մայր,
Կամ սիրատոչոր, սբտահույդ սոխակ:

Սարի հովերն են ալդպես մըմնջում,
Թե՛ ավսվում է արան ալեծածան,
Մեծ քարավանի զանգերն են հնչում,
Թե՛ մորմոքում է աշունը ղեղձան:

Հարսանիք է այդ հայկական դոստոյում,
Լացն ու ծիծաղը խառնված իրար,
Դալուկ տերեփն է հողմի դեմ դողում,
Թե՛ կարկաչում է առուն մեղմալար:

Շամբոն է արդյոք երգով ողջունում
Սրեածագի շողերն առաջին,
Թե՛ կռունկներն երամն է երգում՝
Սյնպեւ կարոտով, այնպեւ տխրածին:

Քամի՛ն է լճի սիրան ալեկոծում,
Թե՛ վափում է գլխահակ ուռին,
Ժիր մանուկներն են ուրախ ձայնակցում
Իրենց կորամեջք տատի օրորին:

Պանդոն է գուցե ալդպես մղկաում՝
Ցուրտ օտարության սյունին շրթալված,
Թե՛ հնձվորներն են վերագառնում առն՝
Հին դարդը երգի բերանը աված:

Մաճկա՛ն է լարել անուշ հորովել,
Հովվի շվին է մրմունջով երգում,
Աղջիկն է դուցե յարեց խոռովել,
Այդպես սրտակեղ լալիս, հեկեկում:

Այդ Կոմիտասն է, որ հնչում է հար
ն՝ ի կախարդական, և՛ վառ, և՛ նրբին...
Դու կապրես, երկրիս մեծ սրնդահար,
Քանի երկնքում կշողա արփին:

ՀԱՅՈՑ ԱՇԽԱՐՀ

Հայոց աշխարհ, հպարտ եմ ես,
Որ քո զավակն եմ հաբաղատ,
Եվ անսահման սիրում եմ քեզ,
Հայրենական հողն իմ ազատ:

Եթե ցանկաս՝ կյանքս էլ կտամ,
Կտամ ըստդ գանձերս անդին,
Որ քո աչքերը միշտ ժպտան,
Հավետ ծաղկի կյանքիդ այգին:

Քաջերը քո թող միշտ արթուն
Պահակ կանգնեն քո լույս բախտին,
Որ թշնամին չմտնի տուն,
Կտրի հայոց կանաչ բարդին:

Հայոց աշխարհ, հպարտ եմ ես,
Որ քո զավակն եմ հաբաղատ,
Եվ խենթի պես սիրում եմ քեզ,
Մովհտական հողն իմ ազատ:

ՀԱՆԱՊԱՐՀԻՆ

Անցած տարվա ամեն վարկյանն ինձ համար մի գանձ էր անգին,
Կյանքս երգ էր, բախտս ծիծղուն մի գեղունի վառղը ձեռքին,
Եվ ես խոհուն ու տքնաջան՝ հղկում էի քարեր մաքմար
Իմ ապագա նոր երգերի քանդակադարձ շենքի համար:

Ահա հիմա նորից անա՛հ կանգնած եմ ես կյանքի ճամփին,
Ու ժպտով եմ նայում ես թե արեին, թե սև ամպին.
Քայլում եմ հալ, աչքըս հառած երգի լեռան վեհ կատարին՝
Եվ վառ հույսով, լույսով, հույզով ողջունում եմ այս նոր տարին:

ՌՌԻՍ ՄԵՐ ԱԶԳԻ ԿԵՆԱՅԸ

Պայծառ է ուռւ ազգի հոգին,
Հաստատ, հզոր ամբողջ է,
Մտքի զանձեքն՝ անթիվ ու հին,
Սիրտը շքեղ ծաղկոյ է.

Խմենք սրտանց այս թափն անդին
Ռուս մեծ ազգի կենացը:

Չզիմացալ նրա դարկին
Տևտոնական սև օձը,
Լույս է տալիս տիեզերքին
Նրա հոգու հնոցը.

Խմենք սրտանց այս թափն անդին
Ռուս մեծ ազգի կենացը:

Բաշխում է միշտ եղբայր ազգին
Սրտի կրակն ու զանձը,
Լցրեք զինին, հայոց զինին,
Չկան արցունքն ու լացը.

Խմենք սրտանց այս թափն անդին
Ռուս մեծ ազգի կենացը:

Մ Ո Ս Կ Վ Ա

Միրում եմ քեզ, ով փառապանծ, հերոս քաղաք,
Դու հորդարուես ահունքն ես մեր երջանկության,
Շքեղ փառքով կապրես բազում հաղարամյակ,
Լուսեղը քո հավերժորեն կրոցկտան:

Մոսկվա, մենք քեզ երախտապարտ ենք դարեղներ,
Եղել ես դու վե՛հ լուսատու հայոց ճամփին,
Եվ արդ, կանգնել ես հաղթական ու շինարար՝
Որպես ադատ ժողովրդոց բախտի դարբին:

Երկիր-աբար նայում է քո աստղի շողին,
Դու՝ մարդկության տենչանքների փարոսն անմար,
Դու՝ նոր մարդու, նոր աշխարհի ուխտատեղին,
Սովետական մեծ տերության քաղաքամայր:

Դրկումդ է լուռ հանդչում Լենինը կենսատու,
Մտալինն արև, դարուն բաշխում տիեզերքին.
Անմահ ես դու, հրաշագործ, հզոր ես դու.
Զքնաղ Մոսկվա, դու մեր սիրան ես ու մեր հոգին:

Ս Ե Վ Ա Ն

Ո՛վ Սեանա չքնաղ ծով, ես քեզ էի երազում,
Օտար հեռվում թախիծով ես քեզ էի երազում:

Քո բարձունքից անդադար ձեռքով անում քնքշագին,
Կանչում էիր հոգեթով, ես քեզ էի երազում:

Մերթ քնի մեջ դու գալիս շոյում էիր իմ հոգին,
Խնչպես ծաղկած սաբի հով, ես քեզ էի երազում:

Մերթ դժգունում էր սիրտս, վախենում էր թե հանկարծ
Մեռնի քո վառ կարոտով, ես քեզ էի երազում:

Մարտի դաշտում էի ես, քեզնից հեռու, բայց քեզ հետ,
Քեզ հետ էի միշտ սրտով, ես քեզ էի երազում:

Դիտելի, որ կգանք մենք՝ հաղթանակով պսակված՝
Ու այդ պայծառ հավատով, ես քեզ էի երազում:

Եվ արդ, կանգնած դեմ դիմաց՝ մենք ժպտում ենք իրարու՝
Ազատ, անվիշտ, անվրդով, ես քեզ էի երազում:

ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐ

Մայր իմ, եկել եմ քո հողաթմբի առաջ ծռնկ չոքել
եվ կարոտագին աղաչում եմ քեզ՝ խոր քնից վեր կաց,
Քո շուրջը նայիր, տես ի՞նչ փառահեղ դարդեր են հագել
Մեր ոստանները, սար ու ձորերը, դաշտերը ծաղկած:

Ե՛կ, մեզ հետ տոնիր վերածնումը հայոց աշխարհի,
Ու հարսանեկան թաշկինակդ առ, հաբսիդ հետ պարիր,
Քո շուրթով ըմպիր մեր երջանկության աղբյուրից մի թաս
եվ այն ժամանակ դու էլ չես մեռնի, դու կանմահանաս:

ԽՐԱԽՃԱՆՔԻ ԵՐԳ

Մեր գլխին թող միշտ փայլի
նոր կյանքի արևն անմար,
Մեր սիրտը թող միշտ կապի
Յոթ դույնի շքեղ կամար:

Ե՛րգ անա, սիրուն աղջիկ,
Հո՛ւր փառիք, ջան՛նլ աղա,
Բո՛յ քաշիք, անո՛ւշ մանկիկ,
Ծո՛վ լույսի գրկում շողան:

Այն ահեղ ձմեռն անցավ,
Եվ եկան օրեր պայծառ,
Ի՛ր անգին զարդերն հաղաղ
Մեր հաղթող աշխարհն անծայր:

Պա՛ր քոնեք, հարսներ սիրուն,
Ծա՛փ տվեք, ջան՛նլ ու ծե՛ր,
Թո՛ղ հայոց ազատ երկրում
Միշտ լինի խնդում ու սեր:

ԵՐԳ ՀՆԳԱՄՅԱԿԻ

Մեծ մաքառման այս հինդ տարին
Սովետական մեր աշխարհին
Կբերի նոր, ուրախ օրեր,
Լույսի ծովեր հեքլաթյին:

Նոր ավաններ, նոր ոստաններ,
Մշտականաչ այգեստաններ,
Նորակառույց դպուղեր ծաղկուն
Կղարդաբն երկիրը մեր:

Սարի հովից ալիծածան՝
Կերպեն հասկերը քաղցրաձայն,
Տխուր, տոչոր խռպաններում
Ծաղկած ծառերը կցնծան:

Կդառնա մեր երկիրն անապատ,
Ամենադուր, ամենահաղթ,
Ազատ մարդու ձեռքով կերտված
Հավերժական շքեղ դրախտ:

«ՀԱՂԹԱՆԱԿԻ ԿԱՄՈՒՐՋԸ»

Կանգնած եմ ես «Հաղթանակի կամուրջին».
Ոտքերիս տակ խուլ մռնչում է Զանգուն,
Արեաթագ Արարատն իմ առաջին.
Շուրջըս՝ անծայր ալպետաճյուղերը ծաղկուն:

Խորախորունկ ձորից որդիս հականեր
Կամուրջն առած իրենց հղոր ուսերին՝
Խորհրդավոր, հավեա հաստատ ու անմեա
Սյուներն են լուռ նայում անցնող ջրերին:

Նայում եմ ես այս հրաշքին ձեռակերտ,
Որ բարձրանում է մեր զվարթ ուստանում,
Խոսում է իմ հոգին ամեն քարի հետ
Ու հոյաշեն կամարներով հիանում:

Երկու ավերն ընդմիջա կապած իրարու՝
Շողում է մեր սովետական կոթողն այս,
Լայնատարած ճամփան զնում է հեռով՝
Լուսավարար, ինչպես շրեղ մի երագ:

Այս կերավածքում հայոց հանճարն է հառնել
Իր նոր փառքով, իր նոր փայլով երփներանգ,
Կզան կանցնեն հաղաբալուր դարուններ,
Բայց նա կապրի մեր նոր, ազատ երկնի տակ:

ՀԱՅՐԵՆԻ ՀԱՆԴՈՒՄ

Հոգն ինձ ուղեկից՝ շրջում եմ հպարտ
Իմ հայրենական ազատ գաշտերով,
Սարից մինչև սար փովիլ է մի արտ՝
Որպես սակեշող ալեծածան ծով:

Անուշ երգում են արտուտներն անվիշտ,
Լսվում է արտի շրջյուներն անմեռ,
Թող ձեռքերը ձեր դալար լինեն միշտ,
Ո՛վ իմ հայրենի քաջ սերմնացաններ:

Հասուն հասկերը շարեշար կանգնել՝
Ճոճվում են դվարթ գեփյուռի հեքից,
Կարձեռ բյուրավոր ճկուն աղջիկներ
Ներդաշնակ, նրբին նազում են մեկից:

Եվ ես աչք դարձած՝ նայում եմ անշեջ,
Կախարդված եմ այս նրբագեղ պարով՝
Կուզեի կյանքս երկարեր հավերժ
Հայրենի հանդի լույս ճանապարհով:

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Կանաչ դաշտում խաղ են անում թիթեռներին ու երեխան՝
Արաք-աշխարհ իմ լույս մանկան թվում է մի վառ երազ,
Թիթեռները անհող, զվարթ ծաղկից ծաղիկ է թռչում,
Եվ մանկիկա հետեն ընկած վազվզում է, կարկաչում:
Մեկ էլ հանկարծ թիթեռները հանկերի ծովը մտավ,
Եվ մանկիկա շատ սրունց, բայց էլ հրեք չդտավ...

Ա՛խ, թիթեռներ-մանկութունս էլ մի օր թափ իմ ձեռքից,
Սրտանց լացի, ձայն տվեցի, արձադանքը՝ ցավ, կսկիծ,
Եվ քանի ես հառակ առա, տյնքան էլ նա քաղցրացավ,
Կանաչ սարից դուրթեց, կանչեց, զննց-զննց, հեռացավ:

ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

Բացում եմ դուռը մեր այգու,
Ներս եմ մտնում լուրջ ու լռին,
Խնձորենին նոր է ծաղկում,
Կանաչ շոր է հագել ուռին:

Բալենիները նրբավարս
Կուացել են երգող առվին,
Ու բարդիները երկնահաս
Ողջագուրում են արևին:

Բոլորը ինձ այնպես ծանոթ,
Այնպես մոտ են ու հարազատ,
Բայց ես՝ հեռվից եկած ճամփորդ՝
Արևախանձ ու ալեղարդ:

Այ, այս բարդին ճյուղ էր փոքրիկ,
Երբ ես մի օր թողի նրան,
Այդ ե՞րբ դարձավ այդպես վերձիգ,
Բարձրագագաթ ու գեղիլեան:

Ծերացել է ընկուղենին,
Փշատենին փոխվել այնքան,
Չորացել է հին նունենին,
Դեղձիները վաղճւց չկան:

Նրանց հողում՝ երգով զվարթ՝
Ջահել ծառերն են բարձրանում,
Ժպտում են ինձ շուշան ու վարդ
Նվ իմ ճամփին բուրմունք ցանում:

Մոտ եմ վազում, սրտանց գրկում,
Համբուրում եմ ամեն մի ծառ,
Առուն խանդից է աղմկում,
Ծիծաղում է արփին սլաժառ:

Ահման, կյանքի երգը շուրթին՝
Նոր-նոր տուններ են կանաչում,
Եվ ծառաստանը վերքոտին
Ինձ ցնծությամբ է ողջունում:

Ո Ր Դ Ի Ն

Ջատիկեց նա իր գերզատանից,
Մանկութ ընկեր աղբյուրի մոտ,
Եվ հայրենի լեռնաստանից
Կոխիլ գնաց մի առավոտ:

Իր ծոցումն էր նա միշտ պահում
Մի զանգրահեր մանկան նկար,
Նրա համար այս աշխարհում
Դրանից թանկ ոչինչ չկար:

Կովի ըոցով թրծվեց ամուր
Սակավախոս այն լեռնցին
Եվ երգիչները ամենուր
Նրա հմայքը երգեցին:

Բայց մի օր էլ ընկավ քաջը՝
Հոգում երազը ոսկեվառ,
Բացին կրծքի ալ-կանաչը,
Տեսան... սրտին՝ մանկան նկար:

Ու երգ դարձավ քաջի կյանքը,
Մտավ ամեն պալատ ու տուն,
Ծովեր կտրեց այդ վառ երգը,
Եկավ հառավ քաջի որդուն:

Հիմա որդին մեր բյուրավոր
Մանուկներին հետ միասին
Երգում է երգն իր հերոս հոր
Սեփական սրտի մասին:

ԹՈՌՆԻԿԻ ՀԱՄԱՐ

Գնաց իմ ուրդին,
Էլ ետ չը դարձա՛մ,
Մեր հանաչ բարդին
Հանկարծ չորացա՛մ:

Գիշերներն անքուն
Նստա ու լացի,
Ծովի պես անհուն
Արցունք թափեցի:

Մի օր թռնիկըս
Արցունքիս տեսա՛մ,
— Ինչու ես լալիս,
Տառիկ ջան,— տասա՛մ:

Միտքս չիմացա՛մ
Ինչ պատասխան տա՛մ,
Լեզուս չորացա՛մ,
Էլ խոսք չգտա...

Թաղել եմ հիմի
Ցավերս իմ սրտում
Էլ լաց չեմ լինի,
Խոտում եմ, խնդում,

Որ ուրախ լինի
Թռնիկս աշխարհում
Արցունք չտեսնի
Տառի աչքերում:

ՅԼԾՈՒԹՅԱՆ ԵՐԳ

Իմ պաշտելի, իմ հուրհրան,
Դաժան օրերն անդարձ կորան,
Մեղանը բաց, զինին վրան,
Թասերը լից բերնեբերան,

Հայոց ազատ
Արևի տակ
Խմենք, խնդանք,
Կյանքին փառք տանք:

Դու, սեպչյա իմ սրտակից,
Մեր շեն ու նոր օջախներից
Կանչիր թող գան դուռ ու դրկից,
Քո նուրբ ձեռքով թասերը լից,

Հայոց ազատ
Արևի տակ
Խմենք, խնդանք,
Կյանքին փառք տանք:

Մեր պատերի հոգին արդար
Հաղար տարվա տենչն անկատար
Պահեց անշնչ ու անվթար...
Հիմա ծիծղուն բաժակըդ առ,

Հայոց ազատ
Արևի տակ
Խմենք, խնդանք,
Կյանքին փառք տանք:

Օ Ր Ո Ր

Ննջի՛ր անհող, իմ լույս մանկիկ,
Օրոր եմ ասում,
Դու՝ նոր բացված սարի ծաղիկ,
Հոգյակ սիրասուն:

Մեր փողոցում քնքուշ նազով
Ապական է հոսում,
Ննջի՛ր, բալիկ, գիշեր է գով,
Օրոր եմ ասում:

Աճի՛ր, խնդա՛, մեր անուշիկ,
Ազատ աշխարհում,
Լաց մի լինի, կարժրաթշնի,
Հոգյակ իմ սիրուն:

Ննջի՛ր, ննջի՛ր, իմ լույս մանկիկ,
Դիշեր է զըսում,
Աստղերն ինձ հետ քեզ անուշիկ
Օրոր են ասում:

Ս Ի Ր Տ

Մաքերիա մեջ խորասուլի՝ լուռ նստել եմ անտառում,
Թիթեռները գալիս են, ծաղիկներին են թառում,
Թռչունները ծառերի կատարներն են զարդարում,
Կողքիս անուշ երգում են առվակները գալարուն,
Ալիքները խաղում են թավջամամուռ ժայռի հետ,
Դրքջում են, ծափ տալիս, վազում, կոճչում են անհետ:

Բայց այս պայծառ վայրկյանին ձանձրույթն է ինձ չարչարում,
Ո՛չ ծաղիկներն են դուլթում, ո՛չ անտառը, ո՛չ առուն,
Լ՛նկեր եմ ես փափագում, մի սրտակից, լավ ընկեր,
Որ ունենա վճիռ սիրտ, սրտում՝ ժպիտ ու երգեր,
Նստենք ծառի շվաքում, խոսենք մարդուց, աշխարհից,
Հոգին հոգուն տանք նվեր, համբույր քաղենք իրարից:

Ի՞նչ եմ անում ծառերը, այս ծառերը ոլորուն,
Նրանք անվերջ միակերպ գլուխներն են օրորում,
Ի՞նչ եմ անում շատախոս, մշտամբմունջ այս առուն,
Սիրտ եմ ուզում, մարդու սիրտ՝ խինդով, վշտով վարարուն:

ԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Այդպիսիքին ես ու տղան թափառում ենք անտառում.
Ինձ ողջունում են իմ ծանոթ առյակները վարարուն,
կակաչները քնքուշ փարվում, մեր ոտներն են համբուրում,
Շուշանները շռայլորեն անմահություն են բուրում,
Մաղկած ծառերը ծիծաղում, ծափ են տալիս ցնծալին,
Թռչունները նախանձում են իմ դայլայլող մանկիկին
եվ իբարու ձայնակցելով՝ դեղձեղում են քաղցրալար,
Երգով, շողքով ողողվում է ծառաստանը ծայրեծայր:
Այս վայրկյանին լեռնաշխարհիս աղբյուրների պես հստակ,
Հույսի, լույսի լճակներն են հորձանք տալիս կրծքիս տակ:
Թվում է, թե անհուն դանձեք ինձ պարզեցել են ձբի,
Ես տես եմ մի հեքիաթային, հաղարեւանգ աշխարհի:

ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՐԳ

Ահեղ ոսոխին հաղթել ենք մարտում,
Կործանող ձեռքից աշխարհը փրկել,
Արևն է հիմա իր դահից ժպտում,
Հնչում են գարնան սրտագին երգեր:

Խնդության ձայնից աշխարհն է թնդում,
Այդ մենք ենք տոնում օրը Հաղթության,
Ցնծում է մեզ հետ, մեզ առաջնորդում
Բոլոր դարերի հանճարը տիտան:

Հավերժ կշողա մեր երջանկության,
Մեր ազատության ջաշը ցնծագին,
Երբեք չի կրի ստրուկի շղթան
Ազատ, անկաշկանդ մեր խիղախ հողին:

Խնդության ձայնից աշխարհն է թնդում,
Այդ մենք ենք տոնում օրը Հաղթության,
Դեպի գալիքն է մեզ առաջնորդում
Բոլոր դարերի հանճարը տիտան:

ԳԱՐՈՒՆՆ ՈՒ ԵՍ

Թիկնել եմ ետ կազմու բնին,
Ապարանքումս անձեռակերտ,
Կանչել եմ հյուր՝ ծաղիկներին,
Աղբյուրներին երանավետ,
Շաղին, շողին, հովին, հավթին,
Երկնի ծովին կախադղական...
Հյուր է հկել իմ խնջույքին
Թռչունների հզոր արքան:

Ու ցնծության թափն իմ առած՝
Զարկում եմ ետ դարնան թափն,
Իմ նոր երկրի պայծառ կենաց
Սրտանց ըմպում ենք միասին:
Տենչում եմ, որ ողջ աշխարհում
Երջանկություն թագավորի,
Հավերժ հոսի խինդի սուտն,
Ինչպի անձուներ գարեբի:

Այս դարնան պես կյանքը գառնա
Մարմնավորված գեղեցկություն,
Ու ոչ մի սիրտ փուշ չունենա,
Պալատ դառնա ամեն մի սուտ:
Հավատում եմ մեր դալիթին,
Նա կլինի ավելի վառ,
Քան, ինչ տենչում իմ հպին
Այս օրերում արևափառ,
Քան, ինչ կարող են երազել
Իմաստուններն ամենագետ,
Նրա հիմքն է՝ հաստատ ու յեն՝
Մեր այս աշխարհը լուսակերտ:

Խ Ո Շ

Այս ուսենու ճյուղերի տակ անցան օրերս մանկական,
 եվ նա էր, որ մի օր դարձավ բողբոջ սիրուս լուռ վկան.
 Հիմա տղաս է թովոում ուսենու տակ այս կանաչ,
 Շուրջը՝ ծաղկի բուրմունքն անուշ և ջրերի մեղմ կարկաշ:
 Չգիտեմ՝ ի՞նչ կյանքով կապրենք ես և այս մեր ծառը հին,
 երբ այս անդից գան ու անցնեն թռռելիս ու իր սիրունին:

ՏՈՆԱԿԱՆ ԳԻՇԵՐ

Ծանրանիստ ուսերին Ծեր Արագածի,
 Զերթ անհաս, ձյունափայլ կատարը լուսն,
 Վեհությամբ հմայուն ու երագածին՝
 Բարձրանում է մի նոր աստղադիրտարան,
 Մի գողտրիկ ձեռակերտ, հոյակապ կոթող
 Ու ճարտարարվեստի հազվագյուտ տիպար,
 Որ այնպես դրավիչ, այնպես հոգեթով
 Նայում է աստղերին՝ հաղթ ու տիրարար:

Ու այսօր տոնական նրա բացումին
 Խմբովին դալիս են նոր «ուխտավորներ»,
 Զորերում թնդում են խենթ արբեցումի,
 Արևոտ օրերի նվազներ, երգեր:
 Իմ մտքում խոհերի զինավառ գնդեր՝
 Ես էլ եմ բարձրանում դեպի Արագած,
 Երկու լավ ուղեկից ընկեր եմ գտել՝
 Մեկը՝ մի հին որսորդ, մյուսը՝ գառնարած

Ծեր ճամփին ընկած են սեպածե ժայռեր,
 Ծերուկներ դարավոր, մամուղատ, մռայլ,
 Աստղերի հմայքն է մեր հողին այրել,
 Կարո՞ղ ենք այս տոնին սառնասիրտ մնալ...

Ու ահա կանգնել ենք լայն հրապարակում,
 Ու վեր է խոյանում շենք մի սրածայր,
 Խնդության երգերի հուրն է համակում
 Գիշերը, աշխարհը ու սիրտըս պայծառ:
 Իջնում են վերսլաց աշտարակից ցած
 Ուխտավոր ջահելներ, զուլզեր թևանցուկ՝
 Մի սեաչ գեղունի այնպես է հուզված,
 Որ լսիկ թափում է հրճվանքի արցունք:

ձեղքելով բաղմության անտառն ալեկոծ՝
 Ես վեր եմ բարձրանում կարոտով անդուսպ,

Սրբնթաց ընկնում է լազուր երկնքից
Բռնկուն կայծերով հուրհեւ մի ասուպ,
Ներսում եմ Հոգիս լի հրճվանքի բոցով՝
Ինում եմ աչքերըս հեռադիտակին,
Բացվում է անսահման, հարաշարժ մի ծով—
Աստղանախշ, նրբակերտ գորգը երկնքի

Հիասքանչ բնության վեհության առաջ
Էխմում է հոգիս ու անհունանում,
Հուլդերս նոր ավյուն, նոր թևեր առած՝
Այդ ուր են, այդ ուր են այդպես սավառնում,
Նայեր՝ ինչ հմայիչ աչքեր են փայլուն,
Օ՛, նրանք անծանոթ աշխարհներ են մեծ,
Աստղեր են հեռավոր, հավեռ թափառուն,
Որ այդպես հմայում, մագնիսում են մեզ:

Սակայն այդ աչքերից ավելի դյուրիշ,
Ավելի դերող են աշխարհն այս պայծառ,
Այս դաշտերն անսահման, այս երկինքը ջինջ,
Այս կյանքը, օ՛, կյանքը՝ ծաղկած դալար ծառ
Ու ահա իջնում եմ աշտարակից ցած,
Նստում եմ խորներախ ձորակի ափին:
Մաքերիս ալեծուփ օվկիանոս ընկղմված՝
Նայում եմ մեր կտրած ոլորուն ճամփին:

Տեսնում եմ՝ վառվում են աստղերից էլ վառ
Լույսերի լամպերը՝ շողշողուն ողկույզ,
Ու որպես գիտաստղ մի, որպես երիվար,
Էլեկտրաքարն է թռչում գյուղից:
Էլ չկա հայկական եղասալյալին
Ու մահվան թափորի դանդաղկոտությամբ
Իր արաք ալոսող շութի գյուղացին,—
Նա հիմա հեծել է էլեկտրական ձին:

Լույսերի լամպերը՝ կարմրավառ կակաջ՝
Նախշել են խավարը կեռգիշերային,
Սակայն դեռ հնչում է մեր քաղցրակարկաչ
Սպենդիլաբյանի չքնաղ «Էնգելին»:
Այդ երգը հնչում է դարձյալ սրտահույզ,
Ինչպես մանկությանս ժամանակներում,
Օ՛, ողջուն քեզ, վարպետ, մեծ ու նրբահույս,
Այդ սիրտըս է կարկաչում քո ջինջ երգերում:

Զորերում լսվում են հոր ու անգաղաք
Գեղանուշ ձայները տոնական երգի,
Աստղերով, արևով ու իր խորությամբ
երկինքը սրկել ենք ու թափել երկիր,
Աստղերի, նվաճման տոնն է այս գիշեր,
Արվեստի, գիտության, հերոսության տոն,
Յնձության կրակն է իմ սիրտը կիզել,
Ողջուն քեզ, ով գիշեր, գիշեր իմ խնդուն:

ՍՏԱԼԻՆՅԱՆ ՊՈԳՈՏԱՆ

Իմ դեմ փռվել է պաղտաւն
Որպես լույսի լաշտահուն դետ,
Եվ ամերին, ինչպես տիտան,
Կանգնած շենքերը նորակերտ:

Մտքերիս հետ քայլում եմ ես
Այս փառանկ փողոցն ի վեր,
Շուրջիս՝ դարձան ծաղկահանդես,
Հաղարկրանդ հույզի՝ ծովեր:

Ամեն կողմից մեր պաղպաղուն
Ազդարներն են բարեւո՛ւմ ինձ,
Իսկ ես սիրով տալիս ողջուն
Իմ համբիւն եմ անցնում նորից:

Հողիս լցված է մշտաբխուն
Կրակներով՝ հոգարտութեան.
Ծանօթ է ինձ ամեն մի տուն,
Ես՝ հարազատ ամեն մի տան:

Տես, զոխտուն այս պարակից
Լսվում է երգը զվարթուն,
Մանուկներ ծաղկեմանից
Իմ վարդ դառրիկն է ինձ ժպտում:

Իմն են ըստրն այս փողոցում.
Տուֆակերաներն արեաղաբդ,
Շատրվանները մեր ցնծուն,
Մեր երգն անուշ, մեր կյանքն ազատ:

Աչքիս առաջ առան մարմին
Այն պալատները լազմահարկ,
Այն, տես, այստեղ թախծում էին
Ուռենիները զլիտահալ:

Այստեղ խոսկան էր ամայի,
Այստեղ՝ սողալով մի անապատ,
Նըմանց շիրմին հիմա նայիր
Այս շենքերին հաղթ ու հպարտ:

Շրջում եմ ես հողով խնդուն,
Օրն այս կարծես հեքյաթ լինի,
Ապարանքներն են ինձ ժպտում,
Ճամփաս դռնօթիչ ու վերջ հունի:

Ահա քայլերս կանգ առան
Հավերժության ստորոտում:
Դյուքված նայում եմ ես նրան,
Իսկ նա իմ սիրտն է լուռ կարդում:

Պատերն ամուր ու անխորտակ,
Սյունաշարքերը հոյաշեն,
Եվ ողկույղներ քարաքանդակ,
Եվ կամարներ վեհ ու վսեմ:

Մեր նոր հանճարը մարմնացել,
Լեզու առել այն քարերում,
Արարատի պես բարձրացել,
Հաստատ կանգնել է դարերում:

Մեծաքանքար թամանյանի
Մաքի խոյանքն ստեղծարար
Ձուգել է հողը հայրենի
Այն կերտվածքով հավերժափառ:

Այստեղ Անուշն է հառաչում,
Սարոն երգում իր բայաթին,
Թաթուլի թուրն է շառաչում՝
Պաշտպան կանգնած թմկա բերդին:

Այստեղ մեր երգն է հար հնչում,
Կաճառն է սա մեր արվեստի,
Մենք՝ աշխարհում փյունիկ թռչուն,
Մահվան թուրն է՛լ մեզ չի հաղթի:

ՀԵՐՈՍԱՊԱՏՈՒՄ

Աշուն է, բերքառատ, բերկրալի աշուն:
 Նստե՛լ եմ պուրակում մտախոհ ու լուռ,
 Մաքրաջինջ երկինքը, որպես մի անհուն,
 Անսահման օվկիանոս, խաղաղ է ու լուրթ:
 Իմ շուրջը ամեն կողմ ծիծաղում են արդ,
 Ծաղիկներ, ծաղիկներ և՛ դուռնեղ, և՛ վառ,
 Արևը վերևից այնպես ձեռնառատ
 Ոսկեշող անձրև է հորդում-թափում վար:

Գուրակի կենտրոնում՝ աստղադիտարան,
 Իսկ շուրջը՝ շողշողուն շենքեր ու շենքեր,
 Մեղմ հովից թփերը փարվում են իրար,
 Առփակը կտրկաչով համփա է ընկեր:
 Ցածալի ծառուղով անցնում են արագ
 Սևաշյա աղջիկներ, ջահելներ թիկնեղ,
 Բորբոքվում է որպես դյուրթական մի այդ
 Իմ երկրի առօրյան մեծ ու փառահեղ:

Հիշում եմ. աշուն էր, անավոր աշուն:
 Անհաց էր, անկրակ մեր խրճիթը խաբխուր,
 Հեկեկում էր քամին ինչպես կույր աշուղ,
 Մեր երգը լալկան էր, անարև, տխուր:
 Ռազմադաշտ էր գնում քրտնաջան գյուղացին,
 Էլ ոչ ոք չէր հերկում արտերը խոպան,
 Երկիրը կարոտ էր մի պատառ հացի,
 Սարերում չէր երգում և ոչ մի չորան:

Մեր հոգին կաշկանդող այդ խոր խավարում
 Շանթի պես շողշողաց հուլին օդատուփյան,
 Անխնդում, արնաքամ հայոց աշխարհում
 Հնչեցին ընդվզման երգեր հաղթածայն:
 Հիշում եմ մայիսյան պոռթկումը Ղարսում
 Ու նրան եմ հիշում, այդ խելախ հերոսին,
 Տերերի, հնի դեմ մարմնացած ցատում՝
 Մեր հավերժ հարազատ բմբուս Ղուկասին:

Հիշում եմ կռիվը Արգիշտի մոտ
Ո՛ր, մարտը դաժան էր ու անհավասար,
Ընկնում է, ահա, ահա, զարնված, արյունոտ
Մեքասիւր, արեւալ մի երիտասարդ:
Ընկնում է հերոսը. բայց երբ է հաղթել
Քունափոր սողունը թևափոր մարդուն...
Էլ ո՞վ կարող է մեր կերտածը քանդել
Ու մարել մեր վառած կրակները խնդուն:

Տես, նորքի խոր ձորից դուրս գալով հպարտ
Խոչում է գնացքը ցնծութեան ճիչով,
Ու վաղը Սեանից ժինչև Արարատ
Կծփա լույսերի անսպառ մի ծով:
Ու վաղը ձորերում մեր անդեպտոր,
Լեռներում ձյունափառ, գաշտերում անափ
Չես դանի ոչ մի տուն, մի գոմ, մի ախոռ,
Որտեղ չչոզչոզա էլիկտրական լամպ:

Ահա տես, հայաշեն մեր հայրենիքում
Խնչ հախուռն է ցնծում մարդն արևակամ,
Երկնքում թևափոր նավթի թռչուն է երգում
Մեր երկրի երջանիկ աշտօրն, ապագան
Եվ բազմազգ ժի հզոր, ազատ ժողովուրդ՝
Շրթունքին փառապանծ թուխքների երգ,
Դաշտերում, ձորերում ու լեռներում լուրջ
Իր բախան է դարբնում դիշեր ու ցերեկ:

Ահա տես, բարձրացած կուռ պատվանդանին՝
Բացաշունչ Դուկասը հազթ ու ախրարար
Նայում է երազած իր Հայաստանին՝
Աչքերով վառվում ու արևափայլ:
Ու նայիր, ի՞նչ համառ, ի՞նչ հաստատակամ
Դրոճի է նետվում հերոսն անվեհեր,
Օ՛ր, այդպես վեհոքեն, այդպես հազթական
Լեռնային արձիվն է ձախրում գեպի վեր:

Դարուններ երազող այդ խրոխտ մարտիկին՝
Բառնձեկ տարեկան Դուկասին պայծառ,
Հաղթական երկիրըս ձեռքով մարդկային
Կերտել է անխորտակ փառքի հուշարձան:
Իր թևին հրացան, մարտական դիրքում,
Արևոտ աչքերը գալիքին հառած,
Երջանիկ օրերի կարոտը հողում՝
Նա հաստատ հավատով քայլում է առաջ:

Գ Ո Վ Ք

Յնծան, երկիր, արևային Հայաստան,
Հայոց հաբսներ, մայրեր, քույրեր, ցնծացեք,
Հնչեք ուժգին, շեփոք, թմբուկ հազարձայն,
Լույս-աղջիկներ, վարդի անձրևով տեղացեք:

Դուկենք սրտանց մարտիկներին բաշարի՝
Ռազմի դաշտից անմահ փառքով տուն դարձած,
Բարձր պահած պատիվը ժեր աշխարհի,
Հավերժական դափնիներով պսակված:

Բարով եկաք, հայոց հերոս դավաններ,
Ահեղ կռիվ, փառքով մտաք դուք Բեռլին...
Յնծան, երկիր, վարդեր մաղեք, աղջիկներ,
Հոլարտ նայենք դալիք պայծառ օրերին:

Դուկենք սրտանց մարտիկներին բաշարի՝
Ռազմի դաշտից անմահ փառքով տուն դարձած,
Բարձր պահած պատիվը մեր աշխարհի,
Հավերժական դափնիներով պսակված:

ՀՈՎԻԼԻ ԱՂԲՅՈՒՐԸ

Ճամփաբաժան ձորակում, մի լեռնաձիգ ժայռի տակ,
Գիշեր-ցերեկ երգում է «Հովիվ աղբյուրը» հատակ.
Կախարդական կնոջ պես՝ անշեջ ժպիտը շրթին՝
Ձեռքով-աչքով է անում ամեն ծառով անցորդի.
Այլ ժայռի լայն հակատին փորված է մի քառատուղ.
Որ դրոշմել է այդտեղ, գուցե, ծառով մի քերթող.
«Ո՛վ մարդ, սիրտըդ թող լինի այս աղբյուրի պես հատակ.
Ոչինչ չկա աշխարհում լավ համբավից մեծ ու թանկ,
Սա հովիվ էր սարերի, կյանքը՝ վայրի դժնդակ,
Բայց տեսե՛ք՝ ինչ է թողել ծառափներին հիշատակ»:

ԱՐԱԳԻՆՆԵՐ

Արարչագործ գարունն էր աշխարհն-արար գարդարել,
Բայց արագիւլը մեր հին՝ դեռ իր բնին չէր թառել,
Եւով տատըս ալեղարդ՝ ձեռք-հովանին աչքերին,
Նայեց բնին ու ասաց. «Սեւովոր է էս տարին»:

Գնաց գարունը վառման, ծաղիկները չորացան:
Սառցի զրահը պատեց, առվակները համբացան,
Եւ մի դիշեր, երբ ձյունը թիթեռներ էր շաղ տալիս,
Ինչպես ձեթի ճրագներ, հանգան աչքերը տառիս:

Հիմա գարուն է նորից, ծնվել են նոր ծաղիկներ,
Աղբյուրների երգով է լցվել ծիծղուն ձորը մեր,
Եւ մեր բարդու կտտարին՝ կտցած ցողուն, ցեխ ու կիւր՝
Սյն հին բունն են կարկատում երկու ջահել արագիւր:

Իրար զգվում են, շոյում, այնպէս անուշ՝ քնքշագին,
Ինչպես անբիծ սիրահար ավանդապահ այր ու կին.
Նորից երկինքը՝ վճիռ, նորից աշխարհը՝ խնդուն,—
Երկու ջահել արագիւլ մի հին բուն են կարկատում:

ՍԵՎԱՆ ՔԱՂԱՔ

Մի լեռնային լճի ափին
Ու լայնասիրտ սարահարթում,
Ստվերի տակ ճերմակ ամպի՝
Մի նոր քաղաք է զդրդում—
Հանդիպում են այդ քաղաքում
Դնացքները արագընթաց,
Ու սելաներն են դիլ զընդում
Լուսաբացից մինչ լուսաբաց:

Անց են կենում կայարանից
Ուղևորներ բազմահազար,
Փողոցները խնդումնալից,
Էայնարձակ ու լուսապայծառ:
Ու քաղաքից դեպ մոտակա
Հանքահորերը հանրային
Սլանում է էլեկտրական
Նորակառույց երկաթուղին:

Մարմարահատ մարտիկների
Երգը հնչեղ ու հորդահոս
Ցնցում է սիրտը լեռների,
Խնչպես հեղեղ որոտախոս:
Ձայնակցում է այդ հազիթ երգին
Թանձրը անտառը հողմահար,
Ու նրանց հետ մի մեծ երկիր
Իր վերելքը երգում է հար:

Աղմկում են այդ քաղաքում
Աղջիկ, տղա՝ ժիր ու խաժուժ,
Պատանիներ լայնաթիկունք
Ու մանկիկներ արեանուշ:
Այգիներում՝ վարդեր, վարդեր,
Ե՛վ երփներանգ, և՛ շողշողուն,
Հեռվում՝ ծփուն, հառուն արածի
Ու ոսկեհասկ, ծանր ցողուն:

Այդ քաղաքը ժամանակին
Կոչվել է գյուղ — Ելենովկա,
Ջուր է մտել արեծագին՝
Ծեր գյուղացին՝ ձեռքին ուռկան,
Եվ թշնամու ու ծովի դեմ
Մաքառել է հացի համար.
Հիմա կյանքը կուռ կերտում են
Հզորագոր ըյուր կամուռար:

Քաղաքի գեմ՝ կատարը ցից,
Խնչպես գլուխը հովազի
Դուրս է ցատկում ծովի ծոցից
Կանաչագարդ մի հին կղզի:
Հնադարյան բլրի լանջին,
Ուր բուսել է վայրի ծաղիկ,
Բարձրանում է աչքերով ջինջ
Շենք մի լուսե ու գեղեցիկ:

Իսկ ներքևում ծառուղիներ,
Սանատորիան լուսավարար,
Շատրվանն է ընդվզում վեր՝
Յոթ գույներով գլորվում վար:
Մարդիկ՝ շուրջը շատրվանի,
Ծառերի տակ նստած խաղաղ՝
Նայում են այդ ծխածանին
Ու հրճվում են ջրի խաղով:

Եվ աշխարհում մեր լեռնաստան,
Ուր ձորերն են հանդուգվում խոր,
Որպես կանչը ուրախության,
Հիշն է լսվում երկաթուղու:
Ծխնելույզի տնտառներից
Ծուխն է փռվում լճի վրա:
Քանի՜ պոեա կա երազած
Այս օրերը և՛ ջինջ, և՛ վառ:

Հասել եմ ես այս օրերին,
Ու արցունքի էլ ոչ մի լար
Չի ծանրանում իմ քնարին,
Իմ քնարին՝ սրտիս պես վառ:
Նրա համար եմ ես խնդուն
Ու քնարս չի արտնջում,
Մ, երկիր իմ, բո՛վհի երթին
Սրտապարար ողջճւլն, ողջճւլն:

ՍՊԱՍՈՒՄ

Լուսնի լույսով լողացած՝
Անտառն է ննջում,
Ամպերն երկնից իջած ցած՝
Լողում են լճում:

Կողքիս կանգնել է կաղնին,
Ինչպես վեհ արձան,
Աստղերն ինձ հետ այս ժամին
Խոսում են անձայն:

Աղբյուր աղջիկն է անուշ
Կամաց կարկաչում,
Գետակն, ինչպես քաղցր հուշ,
Ջորից է կանչում:

Մեն ու մենակ մտորուն
Կանգնած ծառի տակ,
Կիզում է ինձ, օրորում
Կարդոս անհատակ:

Ռ՛ւր, ես, ռ՛ւր, ես ուշացել
Թաքուն եկ անտառ,
Կարդոս վերք է դարձել,
Ակնթարթը՝ դարձ:

Անտառ, առու, աղբյուր, արտ,
Ողջը քեզ կտամ,
Լուկ մի անդին ակնթարթ
Այցի դաս իմ տան:

ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ

Ե՛կ, քեզ տանեմ լեռները մեր,
Աղբյուրների ակունքի մոտ,
Ուր խաղում են լույս եղնիկներ,
Ծափ են տալիս ջրերը հորդ,
Նստենք ժայռին՝ ամպերից վեր՝
Ծծենք նեկտարն անուշահոտ:

Հազարերանգ ծաղիկներին,
Զուլալ առվին գարկենք վրան,
Ընկեր գառնանք հովիվներին,
Խմենք կաթը՝ սերը վրան,
Դրսենք ինչպես այծը՝ ներին՝
Սարից իջնում է շորորան:

Դրկից գառնանք արծիվներին,
Շանթի երկունքն աչքով տեսնենք,
Լեռնաշխարհի հեքիաթային
Արջալույսները օղջունենք,
Խարույկ վառենք գիշերներին,
Խավարի մեջ ոսկի ցանենք:

Բանանք սիրո ակունքն անբիծ,
Ինչպես աղբյուր հրջանկության,
Դու՝ մի ժպիտ քո շուրթերից,
Ես քեզ սիրո վառ համբույր տամ
Այդ փառահեղ վեհությունից
Ըմպենք վայելքը բնության:

Փառաքանենք խիղախ մարդուն,
Որ տերն է իր հայրենի տան
Ու նոր կյանքի շենքն է կերտում
Վսեմ վեմին ազատության,
Գլխից-ցերեկ երգում խնդուն՝
Հիմն՝ ազգերի հղբայրության:

Արդ, ծաղկում են մեր սուրբ հողից
Հաղարավոր շեն ու ոռոտան,
Եվ երկինքն են հասնում նորից
Շաաբակաները խնդության,
Եվ, աչագեղ իմ սրտակից,
Գնանք աշխարհը Հայաստան:

ԵՐԳ ԷԱՅՐՆԵՒՔԻ ՄԱՍԻՆ

Մեր սովեաական հզոր հայրենիք,
Դու՝ միշտ հաղթական. դու՝ միշտ ցնծաղին,
Քայլում ես զեպի դարերը գալիք՝
Մարդկության քախտի ջահը քո ձեռքին:

Ծաղկիր հովիտյան, փառքով պսակված՝
Դու արդարության խեղախ ջահակիր,
Չկա աշխարհում քեզնից փառապանծ,
Քեզնից լուսաշող մի ուրիշ երկիր:

Դու՝ եղբայրական ժողովուրդների,
Ազատ ազգերի անխախտ Միութիւն,
Քո նալն է վարում համայն աշխարհի
Նախափարը մեծ՝ մեր հայրն իմաստուն:

Ծաղկիր հովիտյան, փառքով պսակված՝
Դու արդարության խեղախ ջահակիր,
Չկա աշխարհում քեզնից փառապանծ,
Քեզնից լուսաշող մի ուրիշ երկիր:

Ո՛ր, Մաս Բաղչեն, ո՞վ ստեղծեց էդպիսի մի հրաշալիք,
Դիշեր-ցեբեկ խնկարկում են հաղար տեսակ անմար ծաղիկ,
Զրուցում են հրկինք հառնող շատրվաններն արծաթածառն,
Զուլալ ջրերն ինչպես դռտի՝ կապում են միշտ վառ ծխածան,
Սիրահարված սոխակները՝ գլուխ դրած քաղված վարդին՝
Համեղդով են դիմավորում լուսապայծառ առավոտին.
Դավիթն էսօր էդ անթառամ ծաղիկների բույրով արբել՝
Սպասում է իր սիրուհուն և՛ տենչալառ, և՛ անհամբեր:
Սհա քաղվեց դուռը բաղչի ու ներս մտավ մի հրեղեն,
Ծաղիկները ծիծաղեցին ու ծափ տվին նամեն կողմեն,
Սոխակները, որպես լույսից տարված-դյութված թիթեռնիկներ,
Վարդի՝ թփերը լքեցին, եկան, ընկան նրա ոտներ:

Բնքուշ նազով, շրորայտով, հազի շորերն անարատ ձյուն՝
Մոտեցավ նա շատրվանի եզրին նստած մեր սասունցուն.
— Բարե, — ասաց, — Սասնա Դավիթ, — հաղար բարով ես եկել դուն,
Բայց ինչո՞ւ ես նստել էդպես մենակ ինչպես ճամփորդն անտուն:
Մանդուլին ասաց, սիրով մպտաց ու կիպ նստեց Դավիթի կողքին.
Դավիթի կողքն էնպես տաքցավ, կարծես դիպավ թեժ կրակին,
Էլ մոլորվեց, խոսք չգտավ, որ պատասխան տար Մանդուլին,
Բռնեց սեղմեց իր լայն կրծքին, համբույր տվեց նրա ճակտին:

Զգովացավ սիրաբ փափազ,

Դրեկեց գլուխը գեղեցիկ, համբույր տվեց երկու ալոտին,

Զրնովացավ սիրաբ պապակ,

Ու ձեռք գցեց, որ համբույր տար իր Մանդուլի անբիծ սրտին,

Բայց իր բերնին իջավ ապտակ:

Եվ արյունը Դավիթի բերնից ցայտեց ինչպես աղբյուրն առատ,

Ողողելով շատրվանի ջրերը ջինջ ու անարատ:

— Մանդուլ, — ասաց Դավիթը խիստ, — ասա, ինչո՞ւ ինձ դաբկեցիր,
Թե դու ինձի չէիր սիրում, ինչո՞ւ Սասուն մարդ ճամփեցիր:

— Դավիթ, — ասաց Մանդուլն անուշ, — դու ես սրտիս սիրածն անդին,
Բեղաճից դատ ես սեր չունեմ, հայտնի է դա ողջ աշխարհքին,
Բառաուն ջահել-ջիվան իշխան էս յոթ տարի ձեռքս են խնդրում,
Ես աշխարհի ջահելներին մեայն, մեայն քեզ եմ ընտրում,

Բայց ամեն բան իր ժամանակն, իր տեղն ունի, կտրիճ Դավիթ,
 Ով խախտի էս կանոնը հին, կարյունոտի բերան ու քիթ:
 Էն մեկ անգամ, որ դու տաք-տաք իմ ճակատը համբուրեցիր,
 Էն քո եկած ճանապարհի սիրտ համար,
 Էն մեկ անգամ, որ հանց կրակ դու իմ աշտերն համբուրեցիր,
 Էն քո անխորձ ջանքերով իմ սիրտ համար,
 Դրանից դեն համբուրելու էլ հրաման չկա երբեք,
 Էն ժամանակ, երբ յոթը օր հարսնիք կանենք, կպսակվենք,
 Դու հավիտյան իմս կլինես, իսկ ես՝ Սասնա թաջ կտրվիմ,
 Էն ժամանակ, իմ արեգակ, տեր կլինես ամեն ինչին:
 Բայց Դավիթ հերսը չէր իջել, եկավ իր ձին թամբեց, հեծավ,
 Բշեց—բերդի դռնից ելավ, հոգում՝ մրմուռ ու սրտում՝ ցավ:
 Խանդով ընկավ նրա ետքից, շատ ազաչեց, կանչեց, լացեց,
 Բայց Դավիթը ետ չը դարձավ, «Դավիթն ուտի կնկանից ծնծ,
 Խանդով Դավիթին խայտառակի՛ր, դրա համար կանչեղ ինձի».—
 Զրուցում էր իր սրտի հետ ու խթանում մտեր իմ ձին:

Խանդով հանեց չմուշկները, ուգեց դուլպանց հասնի Դավիթին,
 Դուլպաները կտրավեցին, քնքուշ ստներն ընկան գետին.
 Մերկ ու բոբիկ վաղ տվեց նա, պատուկեցին ոտներն սպիտակ,
 Կարմիր արյուն ու արնաջուր լցվեց նրա ոտների տակ.
 Դավիթն արագ բռնեց էր ձին, ուշքը լարած՝ ակնաջ անում,
 Մեկ էլ լսեց, որ մի գոռոց սարեք, քարեր է տատանում.
 — Դավիթ, Դավիթ, կանգնիր, անխիղճ, կանգնիր, մինչև զամ
 քեզ հառնեմ,

Մեկ ինձ նայիր, վիճակս տես, հետո դնա էդ քո ճամփեն
 Դավիթն արագ շրջվեց, նայեց, տեսավ՝ Խանդովը հուրհրան՝
 Իր հետևից վաղ է տալիս՝ հյուսքը տված քամու բերան:

— Է,—ասաց մեր Դավիթն անբիծ,—ինչ տխուր է աշխարհի բան,
 Իրարու պես հարթ, անդարդ չէ ամեն մեկի կյանքի ճամփան.
 Մինչև էսօր Խանդով երբ էր բոբիկ ոտը դրել գետին.
 Հիմի բոբիկ՝ քարոտ դաշտում վաղ է տալիս, կանչում Դավիթին.
 Եվ ուր ոտը դնում է նա, էնտեղ դառնում է արյան լիճ,
 Դավիթի սրտում ստքի ելավ ամեն հանցանք ներող մի խիղճ,
 Կանգնեց հանկարծ՝ իր Զալալու սեղ գլուխը գիրկը առած՝
 Խանդով Խաթունը հեալով նրա ետքից հասավ, ասաց.

— Իմ սիրտը մի փշիթ հանց գավ, դարձիր, երթանք, արև պայծառ,
 Ես քեզ էպակս չգիտեի, անավեր, ի՞նչ շուտ նեղացար:


— Էյ, անմահ Խանդով Խաթուն, ի՞նչ ասեմ ես քեզ պես կնկան.
 Ես քեզ համար մեր Սասունից մինչև էստեղ զարկի, եկա,
 Մի համբուրի համար ինձի անարգեցիր քո Խառ Բաղչում,
 Դե, ես ինչպե՞ս չբարկանամ, իր սիրածին ով չի պաշում:

— Կտրի՛ճ Դավիթ, ուխտ եմ անում, քանի հողի, շունչ կա իմ մեջ,
Էսպես բաբիկ քո հետեից պիտի շրջեմ աշխարհն անվերջ:
Խղճաց Դավիթը մեծասիրտ, առավ իր գիրկը Խանդութին.
— Նայիր, — առաց, — Խանդութ Խաթուն, արտում երգող էն
արտու յախն,

Էրնեկ նրան, որ մեզ նման ոչ քե՛ն ունի, ոչ էլ կռիվ:
Սաց, ձեռքով սանրեց նրա սև մազերը ցաք ու ցքիվ,
Չի ու գլուխը շուռ տվեց և երկուսով նորից խնդուն՝
Չրուցելով, կտաակելով, համբուրվելով ետ դարձան տուն:

ԵՐԶԱՆԿՈՒԹ ՅԱՆ
ԾԱՂԻԿՆԵՐ





ԵՐԳ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Սիրում եմ ձեզ, մեր աշխարհի
Առույր, աշխույժ մանուկներ,
Դուք նման եք ծաղկած ծառի,
Ունեք ժպտուն աչիկներ:

Դուք մեր կյանքի վառ պարտեզի
Մոխակներ եք ու վարդեր,
Մեր խնդուծյան մեծ հանդեսի
Դրոշակներն ու զարդեր:

Ո՛վ է երկնից մեր դուրբական
Այսբան աստղեր թափել վար,
Դուք մեր հույսն եք, մեր ասպղան,
Մեր լույսերը մշտավառ:

Դուք մեր վճիռ, քաղցրակարկա՜ն,
Զվարթաձայն առուններ,
Դուք մեր երկրի մշտականա՜ն,
Երջանկաբեր զարուններ:

Կարկաչեցեք, ուրախացեք,
Ո՛վ ժառանգներ աննման,
Զեզ չի դիպչի ոչ մի շար ձևուք,
Մեր աշխարհում անուանման:

ԳԱՋԵԼ ՄԱՆԿՈՒԹՅԱՆ

Մանկություն իմ քնքշադին, ես քեզ ինչպե՞ս մոռանամ,
Ցավով լցրի՞ր իմ հոգին,— ես քեզ ինչպե՞ս մոռանամ:

Դեռ չծաղկած թռչնեցի՞ր, հանգար ինչպե՞ս ուրք մանուկ,
Կարոտ խնդի՞ կրակին,— ես քեզ ինչպե՞ս մոռանամ:

Պահմտոցի՞կ խաղ չարի՞ր, թիթե՞ս, ծաղի՞կ հտևաւր,
Կարկտահար սոխակ իմ,— ես քեզ ինչպե՞ս մոռանամ:

Փափաղ, վափաղ մնացի՞ր քեզ ժպտացող աչքերի,
Մայրա՞կան ջերմ դգվա՞նքին,— ես քեզ ինչպե՞ս մոռանամ:

Մըրի՞կ պայթեց քո դէմին, խնդության սով մնացի՞ր,
Քեզ վիշա-սրով դարկեցին,— ես քեզ ինչպե՞ս մոռանամ:

Ու հիմա, երբ նայում եմ մանկանս անուշ աչքերին,
Ինձա՞ս ես կանգնում անմեկին— ես քեզ ինչպե՞ս մոռանամ:

Կուզե՞ի քեզ հանդիպել այս լուսազարդ օրերին,
Քեզ արե՞ տալ իմ անդին,— ես քեզ ինչպե՞ս մոռանամ:

Կուզե՞ի, բայց, ան, ավաոս, դեռե՞մ, որ ել ոչ մի օր
Ես չեմ դառնա զու՛ղ կրկին,— ես քեզ ինչպե՞ս մոռանամ:

ԽԱՂԻՆԿԵՐՈՒ

Հուշ են դարձել օրերը պատանեկան հասակիս,
Բայց մի տխուր պատմութիւն միշտ խոցոտում է հոգիս:

Դարնան օր էր: Մեր դռան աղբյուրն էր մեզմ կարկաչում
Ձեզունի տակ քաղցրածայն գեղեղում էջ մի թռչուն:

Պատի քարերը բռնած՝ մաղցկեցի դեպի վեր,
Նախշուն երգչին բռնեցի, արի գերի, բնավեր,

Թեկնները կտրեցի, ոտքին մի թել կապեցի,
Մտադույա երկնի բնակչին ինձ խողընկեր ընտրեցի:

Բայց տխուր էր թռչունը, էլ չէր երգում, հովաղում
Ճվ ժամեծամ թառամում, նիհարում էր, նվաղում:

Նայում էր նա ծառերին, երկնի ծովին լուսաջինջ,
Թափահարում թևերն իր, աղերսանքով նայում ինձ:

Ու մի օր էլ կսկիծի, կարոտի կանչը բերնին՝
Մեռավ երգիչ թռչունը՝ աչքը հառած իր բնին:

Հուշ են դարձել օրերը պատանեկան հասակիս,
Բայց թեափոր ընկերս կացահարում է հոգիս:

ՄԱՆԿԻԿՍ

Զգիտե, թե ինչ է վիշաք իմ մանկիկը բոցկրտուն,
Աշխարհն-աբար նրա համար՝ մի լուսակերտ խաղատուն,
Առավոտից մինչ իրիկուն եղնիկի պես միամիտ,
Շողերի հետ խաղ է անում, խաղալով է դալիս տուն:

Մոր աչքերում նա չի տեսել ոչ մի կաթիլ արտասուք,
Նրա քնքուշ սրտի դուռը չեն հարվածել լաց ու ոռոգ,
Ծնված օրից միշտ տեսել է ժպտուն աչքեր, պար ու խինդ
Զգիտե, թե ինչ է քաղցր, քարե բարձր սրտմաշուկ:

Մայրը նրան իր թևերին փայփայում է, օրորում,
Հայրը ուրախ առն է դալիս, նրա աչքերն համբուրում,
Ու նա անհոգ՝ շրթունքներին երջանկովյան վառ ժպտա,
Ինչպես ծագկած փշտոենի՝ ծիծաղում է ու բուրում:

Շուրջըս ծիծաղ, ծափ ու ցնծում, արև վարդեր ու դարուն,
Մանկան նման գեղեցիկ բան ոչինչ չկա աշխարհում:

ՓԱԹԻՆՆԵՐԻ ՏԱԿ

Փաթիլներն անթիվ թիթեռներէ պէս
Հանդարտ խաղալով իջնում են գետին,
Ճերմակ են հագել այգի ու պարտեզ,
Անտառ, անդաստան ու մարգագետին:

Յոթ փոքրիկ տղա ձյունապատ բակում
Խաղում են, սղղում, վազվզում դարձի՝
Նշանց աչքերը հուր են արձակում,
Այտերին՝ կարմիր նորաթիթիք վարդ:

Զուգված սենյակէջ կանչում է, խնդում
Ուրախ բոցկլտող վառարանը տաք,
Բայց յոթ ժիր մանուկ խաղում են, խնդում
Զյունի գեղեցիկ փաթիլներէ տակ:

ԱՐԱՄԻԳԸ

Մեր գեղեցիկ
Երեանում
Շատ անուշիկ,
Խելոք, սիրուն,
Մանկիկներ կան,
Ծաղիկներ կան:

Բայց ես այսօր
Միայն մեկին՝
Թմրիկ, կլոր
Մրամիկին՝
Ուղում եմ ձեզ
Ցույց տալ այսպես:

Մի քաղցրածայն,
Աշխույժ մանկիկ,
Ճակատը լայն,
Կարմրաթշիկ,
Աչքերը սև,
Միջին՝ արև:

Արև լինի,
Անձրև, Բեռ ամառ,
Դուրս է գալիս
Նա պատշգամբ,
Մարդանք անում
Եվ ամրանում:

Երբ գալիս է
Փամանակը,
Նա առնում է
Պայտուակը,
Ուրիշ, խնդուն՝
Դպրոց գնում:

Զուր չի վառնում
Օրերն անդին,
Գալիս է տուն
Ժամանակին,
Հարգում ծերին
Ու մեծերին

Նա՛ միշտ ուսման
Գերազանցիկ,
Ծաղկի նման
Շատ գեղեցիկ,
Եվ փողկապն իր՝
Վարդից կարմիր:

Քաջ կարյուն է
Արամիկը,
Նրան սիրում է
Մայրիկը,
Նրան սիրում է
Հայրիկը:

Հասակ կանոնի
Արամիկը՝
Սաղկնի
Լավ բալիկը,
Կապառանի
Հայրենիքը:

ՊԱՊՆ ՌԻ ԹՈՌԸ

Դեռակի տիկին հպարտ բարձրացող կաղնու տակ նստած՝
 Մի կորամեջք մարդ նայում էր ջրին՝ մտքեքում սուղված,
 Հանկարծ վաղելով թողը մոտեցալ, փաթաթվեց, ասաց.
 — Պապի ջան, պապի, ինչո՞ւ ես տխրել, ինչ ես մտածում, —
 Քորունկ ախ քաշեց ու պատասխանեց պապը՝ դիտին ձյուն.
 — Հաբցնում ես, բալա, ինչ է մտածում քո ծերուկ պապին,
 Կանգնած՝ մի ոտը խոր գերեզմանում, մյուս ոտն՝ ավին՝
 նայում եմ դեմքիդ և քեզ տալիս եմ հաղար երանի.
 Երանի նորից դառնայի քեզ պիս կայտառ պատանի.
 Ինչքան ապրել եմ, հաղար այնքան էլ ապրելի կրկին,
 Բայց միշտ անթառամ, ջահել մնային իմ սիրտն ու հոգին.
 Ջահելությունը երբեք ու երբեք վախճան չունենար,
 Այս կանաչ ծառը միշտ կանաչ լինեք ու չչորանալու,
 Այս տունն հավետ ծաղիկներն մեջ հոսեք, կարկաչեք,
 Վարդի վրայից բլրուլը երգով բլրուլին կանչեք:

Ուղում եմ, բալա, գառնալ կրակոտ մի երիտասարդ,
 Նորից ձի հեծնել, մեր խոտը հնձել, հերկել դաշտ ու արա,
 Տես, ինչքան առատ ու ժեռանդ ունես, իմ նախնիս բալիկ,
 Աշխարհում չկա ջահելությունից մեծ ու թանկ բարիք,
 Իսկ ինչ եմ քեզ մոտ, մի ավերակ տուն՝ ճգնա պալատի մոտ,
 Ես՝ ցամաքած գետ, դու՝ դարձնան գետակ՝ որընթաց ու հորդ:
 Ահա թե ինչ է մտածում պապիդ՝ միայնակ նստած, —
 Ասաց ու նորից գլուխը կախեց մտքում ընկղմված,
 Իսկ ժիր պստանին անհոգ սուլելով, երգելով զնաղ:

ՏՈՆԱԾԱՌ

Մենք քեզ նորից դարդարել ենք,
Մեր սիրելի տանածսո,
Ու քո շուրջը ընդունել ենք՝
Աչիկներով մեր պայծառ:

Եկել է մեր ձմեռ պապին՝
Նվերները շալակած,
Ջուրնե թաղը դրած գլխին
Ինչպես ճերմակ Արագած:

Շնորհակալ ենք մեր Արևից—
Ստալինից իմաստուն,
Որ տվել է մեզ ծաղկալից
Ու երջանիկ մանկություն:

ԵՐԿՈՒ ՄԱՆՈՒԿ

Մի բերքառատ խնձորենի
Բարձրանում է մեր բակում,
Նրա վրա թռչունների
Զվարթ խումբն է համերգում:

Ճյուղերի տակ խաղ են անում
Երկու մանուկ թրվոտն,
Երկու եղնիկ՝ ժիր ու նախշուն՝
Հրաչիկն ու Ավրորան:

Սվավում է հովը թեթև՝
Դարնան բույրով արբեցած,
Խնձորենուց ինչպես թիթեռ,
Ծաղիկներ են թափվում ցած:

Յած են թափվում Հրաչիկի
Սևազանգուր մազերին,
Ավրորայի փափրիկ, անգին՝
Թաթիկներին, ուսերին:

Եվ մեր չքնաղ հայրենիքում,
Արևի տակ հուրհրան,
Մեծանում են, փարթամանում
Հրաչիկն ու Ավրորան:

ԾԱՌԵՆ ՈՒ ՄԱՆԿԻԿԸ

Մեր փողոցի երկու կողմում
Դալար ծառեր տնկեցին,
Այն ժամանակ նոր էր քայլում
Իմ մանկիկը քաջածին:

Ծառերի տակ անուշ-մեղուշ
Նրդեց առուն քաղցրաձայն,
Եվ ծառերն ու մանկիկն անուշ
Իրարու հետ մեծացան:

Տղաս սիրեց ամեն մի ծառ,
Դարձավ նրանց պահապան,
Նրանց երբեք ձեռքերը չար,
Չար ձեռքերը չդիպան:

Հիմա ծառերն ինչպես կամար
Մեր փողոցն են զաւղարեւ,
Եվ մանկիկն երկրի համար
Քաջ զորավար է դառել:

Երբ փողոցով ալիք-ալիք
Անցնում է զորքը հորդուն,
Ամեն կողմից հարս ու աղջիկ
Որդուս վարդեր են նետում:

Կ Ա Ր Ո Տ

Հեռւմ է ծովն արեւածան,
Գալիս դարնվում արեւըին,
Իսկ ես պառկած՝ լուռ ու անձայն
Նայում եմ դորշ ամպերին:

Ինձ չեն դուրսում ծովն ու տարերք,
Կիպարիսները ժպտուն.
Ամպեր, ամպեր, հողի տարեր
Դեպի հեռուն, դեպի տուն:

Մանկիկներն եմ կարոտել,
Կարոտս այնքան խորն է, խոր.
Առանց մանկան, ինչպես թիթեռ,
Կապրեմ միայն ես մի օր:

Մահուկն է երգ, սեր ու վայելք,
Կյանքի սիրտը մշտաբլթուն...
Ամպեր, ամպեր, հողի տարեր
Դեպի հեռուն, դեպի տուն:

Վ Ա Յ Ե Լ Ք


Քայլում եմ՝ բռնած ձեռքերը նրբին՝
 Երջանկաժպտա իմ մանուկներին,
 Պատվո պահակ են կանգնել իմ համբերին
 Սկզբնադիրները հայոց աշխարհին:

Մարգարիտներ է շաղ տալիս առուն,
 Աղբյուրը դարկում ծիծաղի ծնծղան,
 Խայտում են՝ կյանքի շողքով դարդարուն՝
 Իմ նորափթիթ աղջիկն ու տղան:

Շրջում եմ անուշ եղներիներին հետ,
 Անվերջ է թվում իմ շքեղ համբան,
 Եվ այս փառահեղ ժամին առհավետ
 Մտապեղ եմ ես թե՛ մահ, թե՛ դամբան:

ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ





ՄՐՏԻ ՉԱՅՆՈՎ

Յնծությունըս ծովացած՝ ամերից դուրս է թափվել
Ապաքինվում է հավետ հայոց հոգին կարեղներ,
Աշխարհներից հեռավոր հայրենի տուն են դալիս՝
Եղբայրներըս բնավիր:

Նավաբեկված հայության բեկորները ցիր ու ցան՝
Նորից դալիս են իրենց Մայր Հայրենիք՝ Հայաստան,
Հայոց երկինք, խնդության մարգարիտներ թափիր ցած,
Կապիր շքեղ ծիածան:

Ո՛վ Արաղած, դու նրանց տատասկահար ոտքի տակ
Փոխի փաթեմ ծաղկունքի գորգերը՝ քո երփներանգ,
Մեր կարկաչուն աղբյուրներ, քնքուշ մոր պես շոյեցեք
Նրանց շուրթերը պառակ:

Հայրենի տուն եք եկել, դուք մեր աչքին եք եկել,
Ոսոխն էր մեզ բաժանել, հայոց հոգին մըրկել,
Հիմա մեկտեղ, ուս-ուսի պիտի կերտենք դյութական
Ե՛վ պալատներ, և՛ երգեր:

Օ՛, դուք բարով եք եկել, եղբայրներ իմ տաբաղիք,
Ձեզ ողջունում է սրտանց հրաշակերտ մի երկիր,
Եվ աշխարհում ոչ մի հայ էլ չի մաշվի ղեգերուն՝
Ինչպես անընձն արագիր:

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ

Օտար աշխարհից տուն վերադարձած
Մեր լույս մանուկներ, ձեզ հազար ողջուն,
Էլ չեք լինի դուք բախտից հալածված,
Թեև իրեք կտրած տարագիր թռչուն

Մայր Հայրենիքի գրկումն եք հիմա,
Հայոց արևն է շողում ձեր գլխին,
Դիչքան ուզում է թող վեր սլանա
Ազատ, անկաշկանդ ձեր ճախրող հոգին:

Ծաղկեցեք մեր վառ արևի ներքո,
Մեր պես սիրեցեք երկիրն հայրենի,
Դեպի օսպաղան քայլեցեք երգով,
Հայրենի երգը երբեք մահ չունի:

Ձեզ, մեր նորածին ծառեր ծաղկազարդ,
Մեր լույս աղբյուրներ՝ հովիտ կարկաչուն,
Իմ պոետական հոգուց հարազատ
Օղջնւն, օ՛, նորից սրտագին ողջնւն:

ՀԻԱՋՂԱՆԻ ԵԶԵՐՔԻՆ

Նրանք սեղան են բացել Հրազդանի եզերքին,
Հին-հին վշտերը հանձնել ուրախության կրակին:

Շյուղեր էին մայր-ծառի, երբ խորշակը խելադար
Պոկեց նրանց ու գցեց ամեն մեկին մի աշխարհ:

Օտար հողում մաշեցին հոգիները տառազիր
Հավերժորեն դեզերուն, անօթեան, աներկիր:

Ելան կյանքի սանդուղքով՝ մանկությունից ծերություն,
Հայրենիքի կարոտը միշտ վառ պահած սրտերում:

Քանի-քանի պանդուխտներ՝ փափազ հայոց օջախին՝
Զոհ դնացին վշտերի ամենակուլ երախին:

Բայց կանչում էր, գուրգուրում Նոր Հայաստանը հեռվից,
Մոր պես ճամփում էր նրանց իր կենարար արևից:

Եվ արդ, նստած հայրենի Հրազդանի եզերքին՝
Երզում, խնդում են զվարթ, բաժակ զարկում բաժակին:

ՊԱՆԴՈՒԽՏ ԷԱՅԻ ՄՏՈՐՄՈՒՆՔԸ

Նստել եմ ես ծովի ափին՝ ծովի նման փոթորկուն,
Մարդ ու թռչուն, ծաղիկ ու ծառ շնչում են իմ հոգուն.

— Տես, փոթորիկը զաղաբեց, կոհակները մահացան,
Երկնի դեմքին շղարշ կապեց խաղաղության ծիածան,

Ելիր, շրջիր ցնծության մեջ, հրճվիր, ժպտա՛մս ամենքին,
Կարոտներին հրի միջից հանկարծ պոռթկաց իմ հոգին.

— Թող այս ծովը ծփա՛նալերջ, ծաղիկները ծիծաղեն,
Սիրո հեքյաթ պատմեն իրար աղջիկները հրեղեն,

Հավերժական խինդով լցվի ափեղերքը անսահման,
Մանուկ ու մայր, ջահել ու ծեր կյանքի բույրով արբենան,

Բայց թե ուղում եք, որ ես էլ սրտով արբեմ ու խնդամ,
Տարեք դուք ինձ հայրենի տուն՝ Սովետական Հայաստան:

Մ Ո Ր Ս Գ ԵՐ Ե Չ Մ Ա Ն Ը

Վաճառ ծովի չքնաղ ափին,
Աղթամարի հանդիման,
Գյուղակը մեր տանող ճամփին
Կա մի անշուք գերեզման:

Ո՞վ է հանդչում այդ հողի տակ,
Հավերժական խավարում.
Ո՞վ է այդպես անհիշատակ
Անշիրմաբար, անանուն:

Այդ իմ մայրն է, Լսո՛ւմ եք դուք,
Իմ կենսատուն, իմ հողին.
Անհող էի, թիթեռ-մանուկ՝
Թառած իմ մոր Լույս-կըծքին,

Երբ թշնամու թուրը զժնի
Ինձ բաժանեց իմ մորից.
Լսո՛ւմ եք դուք, նա է հիմի
Հեռո՛ւ-հեռից կանչում ինձ:

Կգամ, մայր իմ, մեր դաշտերից
Վառ ծաղիկներ կբերեմ,
Քո տաքաբախտ, տրտմաթախիծ
Գերեզմանը զարդարեմ,

Որ դու հավատ հանդիստ ներհեռ
Հայոց ծովի եզերքին,
Մաղկի աչքով ուրախ նայես
Քո նոր, ազատ թռոնիկին:

Փ Ա Փ Ա Գ

Վերջալույսն իր ջրվեժներով ոսկեկաթ
Արտամետի ալգիններն է ողջում,
Կարմրափողկապ մանուկներն մի ջուկա
Հայրենախոս երգով ծովափ է իջնում:

Ինձ պատում է հպարտության մի սարսուռ,
Իմ երգն է այդ սոխակներն շուրթերին,
Այդ կերտվածքում դրել եմ ես սրտի հուր,
Երազս անհիշ ու իմ կարոտը խորին:

Ծովը հանդարտ ձայնակցում է իմ երգին,
Արձազանքով զրնգում են սառ ու ձոր,
Մանուկներին ողջունում են սրտագին
Արտամետի խնձորները մեղրածոր:

Հաղարավոր ապարանքներ նորակերտ
Երեկոյան շուքն են դցել ջրերին,
Լեզու առել խոսք են բացել սրախ հետ
Ծով ու ալիք, քարաժայռերը լռին:

Իսկ ես պառկած մարգարտահատ պվազին՝
Զմայլանքով դիտում եմ ծովը վանա.
Օ՛, ձեռք չտաք իմ լուսեղեն երազին,
Թողեք հոգիս շքեղությամբ հիանա:

ՆՈՐ ՏԱՐՎԱՆ ԵՐԳ

Ժամանակի օվկիանն է խորասուզվում հին տարին,
Ու մենք ելած փառքերի արևաթաղ կատարին՝
Հրաքորբոք հայացքով նայում ենք մեր դալիքի
Մշտականաչ տնտառին:

Շքեղության շողքերի ինչ երփներանգ ախարան,
Մարմարաշեն պալատներ, ծիածաններ հուրհրան,
Անդաստաններ ոսկեհուռ, լույսի ծովեր արծուի,
Ծիծաղ, ծաղկունք՝ անթառամ:

Ինչ ցնծություն է բերում այս նոր տարին մեզ համար,
Վառենք պայծառ լույսերի, հույսի Զահերը անմար,
Մեր թանկագին ծերունուն դիմավորենք, տուն բերենք՝
Իր զարդերով աճհամար:

Իս վառ հույսով եմ նայում այս հաղթաբայլ նոր տարվան,
Հայաստանը պլևո դառնա ողջ հայության հանգրվան,
Երջանկության ծիծաղով ծայրից մինչ ծայր կլցվի
Երկիրը մեր անասման:

Հավետ փարված աղգերի եղբայրական Միության՝
Կողողողա մայրը մեր՝ Սովետական Հայաստան,
Երջանկության պարտեզում կղայլալի նրբագեղ
Բլրուլը մեր հազարան:

Եվ հայրենի շեն հողում նորից պիտի զընգան
Ստեղծարար ու անխոնջ մուրճերը մեր հայկական,
Երկինք պիտի բարձրանա՝ Զվարթնոցից էլ պայծառ՝
Հայոց շքեղ ապագան:

Ա Ր Ա Ր Ա Տ

Ամեն օր ես նայում եմ քեզ կարոտագին հոլարտութեամբ,
Մի օր ջինջ է հայացքը քո, մի օր գլխիդ չոքում է ամոլ,
Մերթ քո վիհերը մռայլվում, մութ է պատում քո ճակատին,
Մերթ արևն է անհող խաղում լուսե թաղիդ աղամանդին,
Բայց դու միշտ ել՝ թե խինդիդ մեջ, թե քո վշտի անեղ ժամին՝
Հավերժական հանդարտութեամբ նայում ես նոր Հայաստանին:


Քեզ նայելիս սրախ ծովը ալիկոծվում է մինչ հատակ,
Աշխարհում կա ուրիշ մի բախտ, ինչպես քո բախտը դժնդակ,
Դու, որ ճակատըդ գեղեցիկ՝ երկնքի մեջ ես մխրճել,
Դիմեք-ցեքեկ գլխով անթիք շանթերի հետ ես մարտնչել,
Հիմա գերբ... Օ, մի լռի, հոգիս ծարավ է քո ձայնին,
Դո՛ւ նման ես երկիր-երկինքն իրար կապող հավերժութեան
հուշարձանին:


Եվ արդ վսեմ, խորհրդավոր իմաստութեամբ կանգնած ես լուռ,
Ինչ ես խորհում՝ ես չգիտեմ, բայց քո գլխին տեսնում եմ հուր,
Տեսնում եմ ու ցնծում եմ ես, իմ թանկագին, իմ հարազատ,
Ուզում եմ այս արևի տակ մեր սարը ոտքը տեսնել ազատ,
Ու վեհորեն, հպարտորեն վեր խոյացած հասակով մեկ,
Անդադախոր կնճիւղներից հավետ ցրած մշուշ ու մեղ:

Ուզում եմ քեզ ազատ տեսնել, հպարտ կանգնել քո կտուարին,
Ու այնտեղից՝ սքանչացած՝ նայել հայոց նոր աշխարհին,
Տեսնել Միփանը սիգապանծ, ծիծաղկոտ ծովը Բդնունի,
Մեր ոստանները հինավուրց, լեռնապարերը հայրենի,
Հայոց գետերը շառաչուն՝ ծայրից մինչ ծայր սլացքի մեջ,
Մեր հովիտները ծաղկազոր, ծովածավալ դաշտերը պերճ:

Դիտել բոլորը, հիանալ ակնապարար տեսարանով,
Հոգիս պարզվի, ինչպես գաբնան անձրևից ես՝ երկինքը մով,
Հոգ չէ, թե որ անդունդներից հովազ հողմերը մոլեղենեն,
Քո դյուխական վիհութեան մեջ ես թևաբեկ հավետ ընկնեմ,
Եվ սառույցներըդ սառնաշունչ դժկամ դառնան դադաղս անդարդ,
Ո՛վ Արարատ, միայն թե դու, միայն թե դու լինես ազատ:

ՊՈԵՄՆԵՐ





ՔՅՈՌՈՂԼԻ

ԱՌԱՋԻՆ ԵՐԳ

1.

Բերդաբալաք Էրզրումի կենտրոնում
Մի զեղեցիկ ապարանք էր բարձրանում.
Նա շինված էր ոսկեղեղին մարմարից,
Դիշեր-ցերեկ լուսավառ ու ցնծալից,
Ու ապրում էր այդ պալատում շողջողուն
Ալի փաշան, հոսր արքան իր հոլում:

Ալի փաշան տեր էր մի ողջ աշխարհի,
Ուներ հոտեր փրփրաբուրդ ոչխարի,
Մարգեր, հողեր օվկիանի պես անսահման,
Այգեստաններ, չալիւր-չիման, անդատան,
Հարեմ, հարճեր, թիկնապահներ աներկյուղ
Եվ հարկատու հազար ու մի շեն ու զյուղ:

Ուներ կանաչք մազնիսական հայացքով,
Արեւը՝ մոմ-նրանց դեմքի փայլի քով,
Ի՞նչ ծաղկոցներ, շատրվաններ, պարտեզներ,
Կանամահաւոր ով այդ բոլորը տեսներ.
Սակայն Ալին հռչակված էր աշխարհում
Իր ձիերով հատընտիր ու վառվուռն:

Եվ իր երկրի ո՞ր անկյունում լավ ձի կար,
Պետք էր նրա երամակին «բնծա» դար.
Մին բերում էր շաքար լեզվով շողոթորթ,
Մինը՝ թրով, թունավոր ու հաստակոթ,
Մինն՝ արեւտաջ ջոկապահի խճիթից,
Մինն՝ անվանի վաճառական «խցիթից»:

Ալին ուներ մի բազմափորձ ձիագետ,
Ընկերօջ պես մտերիմ էր ձիու հետ,
Մահվան մամին հայրն էր նրան կտակել:

Թե տշխարհում չկա ձիուց լավ ընկեր...
Նա, Հասանը, իմաստուն էր, ծանրախոհ,
Ե՛վ սիրում էր, և՛ ատում էր խիստ ու խոր:

Քառսուն տարի իր տիրոջը ծառայել,
Բայց երբ է նա փառքի, պատվի ծախսվել,
Միշտ եղել է հավատարիմ, անձնազոհ,
Զի աշխատել դժկամությամբ ու նազով:
Տվել է նա ջանկությունն իր զոհար
Փաշա-տիրոջ նժուգներին անհամար:

Նա իր երկար ճանապարհին և՛ սիրել,
Ե՛վ սիրվել է աղջիկներից դեղանի,
Բայց երբ արյունն սկսեց քիչ-քիչ սառել,
Ու տեսավ իր հետքից ժառանգ, ծիլ չունի,
Կյանքը կասկեց մի սեաչյա հայունու,
Եվ ունեցավ մի ժիր տղա, բոց ու հուր:

Յնծաց Ամին, քսան տարով ետ գնաց,
Հասավ, խմեց ջանկության աղբյուրից,
Ջերմ համբուրեց նրան, որ դերդ ալգարաց,
Ծագեց, ծաղկեց, իր հետ անշեջ հուր բերեց,
Հոր օջախում վառեց խինդի տարուշան,
Նրա անունը նա դրեց Ուռուշան:

2.

Բայց աշխարհում ո՞վ է հաղթել զե-մայհին,
Հավերժական այդ հրեշին սառնարյուն,
Ուռուշանի մայրը մեռավ այն պահին,
Երբ իր տղան մի մանուկ էր թրվառն,
Իսկ Հասանի զլխին, սրտին՝ խաղաղ ծով,
Խոր ձերբության ձյունն էր թափվում թախիծով:

3.

Ամառային մի հմայիչ ուրախ օր
Ամին գնաց երամակին տեսության,
Որ փարատի իր վշտերը խորախոր,
Ընկեր դառնա աղատ, անվիշտ բնության.
Եվ երբ հասավ Զուլալաջուր լճակին,
Մոտ վազեցին հոտաղները ցնծազին:

Նրանք Ամուն մտերմաբար խնդրեցին,
Որ ձիերին ուշք դարձնի, պահպանի.
Մեկն ուզում էր հանդիպել իր սիրածին,
Որ իր զիզված սիրտ կարոտն առնի,
Մեկը տարով իր շապիկը չէր փոխել,
Տան փափազն էր նրանց ճամփան ողողել:

Զիբուծը ջահերին չմերժեց.
Չէ՞ որ նա էլ նրանց պես էր մեծացել,
Ունեցել էր հողսեր, ցավեր՝ ծանր ու մեծ,
Տառապանքի ճանապարհին ծերացել,
Եվ գնացին հոտազները դեպի տուն,
Մնաց Ամին ու մի խաղաղ մենություն:

4.

Ամին նստած կանաչավետ լճափին՝
Նավարկում էր հին հուշերի օլիկիանում
Ականջ զրած ալիքների ծփանքին՝
Ծխում և իր հուշերով էր հիանում,
Իսկ ձիերը փոված փարթամ արոտում՝
Փնչում էին, արածելով խնդփողում:

Եվ այդ մամին լճից հանկարծ դուրս թռավ
Նրբասրառնք, աղնաբարյուն մի նմույշ.
Աչքերն՝ արև, բաշը՝ կայծակ, պոչը՝ թափ,
Որպես ջայլամ թեթևաքայլ ու առույգ.
Կանգնեց, հայեց նմույզների խնջուքին,
Սուրաց, հասավ էն սևաթույր զամբիկին,

Սիրահարի նման նրան պինդ փարվեց
Եվ նրա հետ աղնաթաթում մերձեցավ.
Մինչև Ամին իր մտքերը հալաքեց,
Հրեղեն ձին երամակից հեռացավ,
Արագ թափով թռավ հասավ լճակին,
Սուզվեց ջուրը, ձուլվեց ծիծղուն ծփանքին...

Այս անպատում, անկրկնելի տեսլից
Խիստ դարմացավ մեր Հասանը փորձառու.
Այդպիսի մի խորհրդավոր, ահալից
Դիպվածի նա չէր հանդիպել իբր օրում,
Լուկ լսել էր իր տատիկից ալեղարդ
Հրեղենի մասին չքնաղ մի հեքիաթ:

Լսել էր, որ Զուլալաջուր լճի մեջ
Կա հրեղեն, առյուծաբաշ մի նժուշոյ
Եւ պապկոյ-պապ պատմվում էր այդ անոկերջ,
Հափերժական առասպելը անստուշոյ,
Նրա մասին սերունդներ են երազել,
Բայց զես ոչ սք հրեղեն ձի չի տեսել:

Բարդու վրա նա երկոտյրի դաշույնով
Փորագրեց տարեթիւնն այդ տոնական,
Եւ վերելց տեղեկները շրջառնով
Ողջունեցին հրեղենի ապագան,
Իսկ Հասանը մտքով սրտին խոսք տվեց՝
Դադանի պահել այս հրաշքը վնճ ու մեծ:

5.

ժամանակը սուրաց, անհետ անց կացավ
Եւ դամբիկը աշխարհ հանեց մի մտրուկ,
Բայց ի՞նչ մտրուկ—մի պատուհաս, մի սև ցավ,
Նիհար, փոքրիկ, փռելխուլ մի միւրուք,
Ոտքից զլււլւմի ալանդակ արարած,
Միթե այդ էր հրեղենը, ո՞վ տեսնում:

Մեկն ասում էր՝ ջուրը գցեք, տղատվներ,
Մեկը՝ թե տանք դադաններին, շներին,
Մեկը՝ թե սա ձի չէ, այլ մի շար անեծք,
Վայ մեր գլխին, մեր արեւին, մեր օրին,
Ծաղրում էին, թքում, մրում, քարկոծում
Եւ դամբիկի նախնիներին անխում:

Պատվի համար կյանքը դոհող մի հասող
Դորդողում էր խոսվահույզ, չարալի,—
— Վա՛յ, դու դայլին կեր դառնայիր, սև խորաղ,
Որ աշտղխի նամարգություն չանեիր,
Դու մեր անգին ջոկի պարծանքը լինես,
Հանկարծ մի օր ծնես, արջի ձագ բերես...

Իսկ Հասանը լուռ նայում էր ու ծխում
Եւ մերթ Ընդ մերթ քթի տակին ձիծաղում:

Նա լսել էր ավանդատան պատերից,
Որ հրեղեն ձիու ձագը տեսք չունի,
Որ նա կյանքի հրեշակերս բաներից

Քիւ ալիւլի ալլանդակ է, անճոռնի,
Բայց հողեղեն բարիքներից կենսավառ
Դառնում է մի սքանչելի երթմար:

Հալատում էր նախորդներն պատմածին,
Փորձ չէր անում այդ մասին գեթ կատկածել,
Նվ հաւատաւ ժպտում էր էն ծերունին,
Չմբան միջից աչքը պայծառ դարունին:

6.

Տարին հկալ, ալիքի պես անցկացալ.
Բայց մտրուկը չնրբացալ մի նշույլ:
Հաջորդ տարում մի քիչ աճեց, մեծացալ.
Ֆակայն նորից նույն իշուկն էր, ծանր ու ծուլ,
Բիթը տափակ, աչքերը վաղ, վիզը կարճ,
Դլուխը մեծ, սաքերը ծուռ ու սմբած:

Այդ օրերում Ալի փաշին հյուր կկան
Մտամբոյի մեծամեծներ անվանի,
Մեկը աշնան բարդու նման չօր, երկար,
Մեկը վիզը բազմադարձան մի կալնի,
Մեկը շտաշք, սապատավոր, ինչպես ուղտ,
Մեկը ջահել, մյուսը և ծեր, և խախուտ:

— Ալի,—ասին,—երամակիդ լուրն առել,
Եկել ենք, որ ձեր տանենք մեզ վայել:

Ալին վստահ իր ձեռքին հողմածին՝
Կանչել ավեց ձիագետին իմաստուն.
Մեղոտ ճակտի խորշմները բացվեցին,
Աչքերն դարձան մանրմական ու ժպտուն.
Նվ կամակոր, անթագակիր այդ արքան
Ծառայի հետ հաշվի նստեց այս անդամ:

— Լսիր,—ասաց,—Հասան ամի,
Թե ինչու եմ քեզ հիշել,
Ինչպես դիտես, ես անվանի
Հյուրեր ունեմ այս զիշեր:
Հեռու, հեռու Մտամբոյից
Ելել-եկել են նրանք,
Որ դիտեն իմ խնդումնալից
Նժույգները բազմերանդ:

Վաղը ճաշին հյուրերին հետ
 Եւ պատշգամբ դուրս կգամ,
 Եվ անհամբեր կսպասեմ քեզ,
 Իմ տան ազնիւ բարեկամ:
 Երամակից դու կջոկես
 Ամեն ցեղից մի ջեյրան,
 Հրապարակ դուրս կբերես,
 Թող տեսնեն ու հիանան:
 Թե ձիերը համարեցին
 Կատարյալ ու անպակաս,
 Դու ամենից թանկագին ձին
 Ինձնից նվեր կտտանաս:

Ամու սիրտը լեզու առաւ հրճմանը,
 Եվ աչքերի խորույհները վառվեցին,
 Ե՞րբ էր փաշան եղել այդպես սրտակից,
 Ովքեր արդյոք նրան այդպես փոխեցին:
 Եվ Հասանը համբավաբեր մարդու պես
 Ինչ ունի իր հոգու խորքում, դուրս թափեց:

— Փաշա,—ասաց,—ձիերիդ մեջ
 Կա հրեղեն մի քուռակ,
 Թեեւ նա դեռ փոքր է ու խեղճ,
 Կերպարանքը՝ ալանդակ,
 Բայց հասկացող, հմուտ մարդը
 Տեսնելուն պես կիմանա,
 Որ էդ փոշոտ աղամանդը
 Երբեք էդպես չի մնա:
 Փաշան ինձնից լավ կիմանա՝
 Հորն է քաշում միշտ տղեն,
 Ու նա մի օր պիտի դառնա
 Սքանչելի հրեղեն...

Եվ Հասանը Ալի փաշին պատմեց այն,
 Ինչ տեսել էր Ձուլալաջուր լճի մոտ:
 Ալին լսեց, ուշքը լաբած՝ լսելյայն
 Եվ հավատաց ձիադետին իր հմուտ:
 Չե՞ որ կես դար ժամանակ էր անցկացել,
 Ամու խոսքին երբեք նա չէր կասկածել:

Գովաստեքի դանձարանից դուրս բերեց
 Ձմրուխտ խոսքեր, գովասանքներ հորդառատ:
 Առատությամբ ձիագետին պարգեհեց

Ու վեր կացալ բռնակալն այդ արեղարդ,
Մինչև դուռը ճամփա գցեց ձեռուկին,
Ինքն շտապեց հյուրերի մոտ ընթրիքի:

7.

Մի լայնարձակ, դեղածիծաղ դահլիճում
Նստած գորգին, թիկնած բարձին ծաղկազարդ
Բազմել էին իշխանները հոբանջուն՝
Ամեն մեկը իրա ղիբքի համեմատ:
Խոսում էին առօրյայից, անցածից,
Երբ ներս մտալ Ալի փաշան հարգալից:

Նա բոլորին միանգամից բարեկց
Եւ յայտադեմ դնաց բազմեց իր տեղում:
Դահլիճն հանկարծ աշխուժացաւ, արևեց,
Կարծես մեկը վերից ծիծաղ էր տեղում:
Եկան հերթով հարձ-աղջիկները նազան,
Ներս բերելով կերակուրներ բազմազան:

Եւ սկսվեց ընթրիքը մեծ, փառավոր,
Ժամերն թուան վայրկյաններ թեքրով...
Ալին որպես եգիպտական փառավոր՝
Հպարտ իրա մրբկաբաշ ձիերով՝
Այդ բազմապերճ խրախճանքի տաք պահին
Ելաւ կանգնեց, այսպես զիմեց բոլորին.

— Ով փաշաներ, ամիրտներ,
Բեկզաղաներ մեծատուն,
Խնդրում եմ ձեզ ահանջ տնել,
Նորութուն եմ հազորդում:
Ինչպես զիտեք, հրամակիրս
Համբալն աշխարհն է առել,
Իմ ձիերն են ինչպես մայրս
Սար ու ձորերս զարդարել:
Եւս երջանիկ ու հպարտ եմ
Իմ ձիերով աննման,
Բայց ահա ձեզ պիտ հազարդեմ
Մի անսովոր հրաշք բան:
Եւ ունեմ մի հրեղեն ձի,
Հուրի-փերի արարած.
Լավ իմացեք սա հեքիաթ չի,
Ոչ էլ սարքած սուտ առած:

Նայնառաբաժ իմ մարգերում
Ապրում է նա լիափրա,
Շողշողում է երամակում
Ինչպես թագի մարգարիտ
Վաղն համեցեք, նրան տեսեք
Ձեր աչքերով սեփական,
Սաամբուլին նվեր տարեք,
Թող վայելի մեր արքան:

Յի այլ լուրից հյուրերը շատ զարմացան,
Ի՞նչ աղնթարի կարծես տեղում բարացան:

Հսկել էին հեթաթեթից մանկական,
Որ հրեղեն ձիեր էլ կան աշխարհում,
Բայց ոչ մի մարդ, ոչ աղքատը, ոչ արքան,
Դեռ չէր տեսել հրեղենին իր օրում:
Ի՞նչ բախտավոր մարդ է կոչել այս Ալին,
Հրեղենով նա կտիլի աշխարհին:

Եվ հյուրերի հոգիները միմեկին,
Ատելության օձը ֆշշաց սրտներում,
Թեև նրանք միաբերան գովեցին
Ծառաներին, ձիագետին ու Ալուն,
Բայց նախանձի դաշույնները թաքցրած՝
Մահիճ մտան լուսարացիք քիչ տոռջ . .

8.

Աբշալույսին Հասան Ամին վեր կացավ,
Լվաց, սանրեց հրեղենին դեռահաս,
Երկար ջանաց, երբ ամեն ինչ վերջացավ,
Նայեց ձիուն և ի՞նչ տեսավ, նորահաջ,
Օ՛, ոչ, իզուր, ինչքան ճգնեց խեղճ Ամին,
Իր մտրուկը մնաց այդ նույն վայրենին:

Ամին թեև տեսավ, որ իր անճոռնին
Հրեղենին ոչ մի բանով նման չի,
Եվ երբ փաշան նրան տեսնի այդ օրին,
Հյուրերի մոտ գլիտ կարմրի, ամաչի,
Բայց հույս ունեւ, որ եկվորները գիտուն
Կճանաչեն հրեղենի վեհ սրղուն:

Քննչական հմուտ պարտիզանը ծաղկացում
Ձի շփոթվում չքնադ վարդեր փնտրելիս,
Այնպես Ամին երամակումն իր ցնծուն
Ազնվազարմ երկվարներ ընտրելիս
Չերկմտեց, չշվարեց մի վայրէջան,—
Գիտեր նրանց թե անցյալը, թե ներկան:

9.

Հյուրերն ահա կերած, խմած, արեցած՝
Ջարդարել են սրտաշամբը դովասուն
Ու բոլորը հրեղենով հմայված՝
Սրտատրոփ սպասում են, սպասում
Եվ մերթ ընդ մերթ գերել դարձած նախանձին՝
Փոփսում է մեկը մյուսի ականջին:

— Տո, մի ասեք թող շուտ բերեն
Հուր-հրեղեն այդ ձիուն,
Մի ամբողջ օր համբերել ենք,
Էլ ինչու են մեզ տանջում:
Շտապում ենք հանուր գործին,
Բայց ուզում ենք լիմանալ,
Թե ինչ բան է հրեղեն ձին.
Օ՛, այսքան էլ ղիմանալ...

10.

Սանթուրն անուշ ձայնակցում է չոնգուրին,
Դալլալում է սիրո սոխակ քյամանչան,
Դափը սրպես թեթևաբու մի տիկին,
Ծիծաղում է, ծափ է տալիս բարձրաձայն,
Ու նրբերան աղջիկները պարում են...
Մեկ էլ լսվեց թե ձիերը բերում են:

Պատշգամբը հանկարծ լոկց, համրացավ
եւ ի կայծակի տրագուծյամբ դատարկվեց,
Ապարանքում մտրեց ամեն խոտք ու ձայն,
Շվայա, գվարթ կեր ու խուսմը դադարեց.
Եւ հյուրերը՝ ամեն մեկը մի սուլթան,
Իջան դաշար հրեղենի տեսության:

11.

Ահա գալիս են շաբբերովն անընդհատ
Ձիեր, ձիեր սիգաճեմ ու սանձակոծ.
Ո՛րտեղից է այդպէս հախուռն ու առատ
Ծայր առել այդ ցնծությունը արերոց.
Գույների փայլ, աչքերի ցոլք, վեհ ու վառ,
Խրխինջ, դուխուն, բաշեր, բաշեր հողմավառ:

Թվում է, թե ողջ աշխարհը ծայրից ծայր
Դուրս է եկել հրեղենին թամաշա.
Ահա, տեսեք, պարանոցը քառածալ,
Խամրած ու ծեր, տակառաձե մի փաշա
Ձեռքը դրած իր ցավազար աչքերին՝
Հարցնում է կողքին կանգնած բեգերին.

— Ասեք, որն է հրեղեն ձին,
Ի՞նչ դույն ունի, ի՞նչ հասակ...
— Մենք էլ, փաշա, շատ նայեցինք,
Բայց այդ փերուն չտեսանք:

Եւ անցնում են հրիփարները խնդուն՝
Բարձր պահած գլուխները գեղանի,
Ոտքերի տակ թե գետինն է զրդում,
Թե պալատը էրդերումի իշխանի,
Բայց հյուրերին չի զբաղում ոչ մի բան,
Սպասում են հրեղենին արեւփայլ:

Անցավ, ահա, վերջին դույզը փառահեղ,
Հրապարակը մի բոպե խաղաղվեց,
Եւ հյուրերի ուշքը որպէս մի աղեղ
Էլ ավելի թևերն պարզեց ու լարվեց,
Եւ այդ հեքոտ, լարված, տարված վայրկյանին՝
Հրեղենին հանդես բերեց մեր Ամին.

— Ահա էս էլ հրեղեն ձին,—
Ասաց Ամին մեր անահ,—
Ինչպես ծովը փոթորկածին
Հանկարծ սառի, համրանա,
Այնպես ահա այդ սև բոթից
Բաղմությունը շփոթվեց,
Կարծես զրկվեց սրտից, օղկից
Եվ ինչպես քար պապանձվեց:
Բայց վայրկյանը թռավ արագ,
Ինչպես գուժկան մի թռչուն
Եվ հյուրերից մեկը վայրագ
Գոչեց ձայնով դողողուն.

— Այ ծերունի, խենթ ես, ախպեր,
Թե՛ ծաղրել ես ուզում մեզ,
Հրեղենին շուտ արա, բեր,
Իսկ այդ ջորին պահիր քեզ:
Հասանք թե՛ երդվում եմ ես
Ուռուշանիս արևով,
Երբեք, երբեք չեմ խաբի ձեզ
Այս հասակումս, ալետր:
Դուք մի նայեք սրա այս մերկ
Գլխին, վզին անձոռնի,
Եկող զարնան պիտի տեսնեք
Հրեղեն է, թե՛ ջորի:

...եվ վերեկից բրբջոցը դայրագին
Շանթահարեց ձիագետի մեծ հոգին.

— Այդ է, փաշա, հրեղեն ձիդ,
Վայ ամաչկոտ այդ էշին.
Հեծիր, հեծիր դնա ջիրիդ
Հյուրերիդ հետ միասին:
— Հրեղենիս մտիկ արեք,
Կասեա բողոտ շուն լինի,
Էյ, ծառաներ, եկեք, թամբեք
Ալի փաշան թող հեծնի:

Մեկ ասում են, մեկ ծիծաղում,
Բշթչում են, ծնկան տալիս,
Ալի փաշան ցավից դողում,
Դույն առնում է, գույն տալիս:

— Մեզ ինչի՞ տեղ դրեր, Ալի,
 Որ անխտիր ամենքին,
 Ասիր-բերիր այս ձաղրալի,
 Այս խայտառակ հարսնիքին,
 Ամսթ, ամսթ ձիազետիդ,
 Երամակիդ թանկագին,
 Հաղար ամսթ ձիապանիդ,
 Քո նամուսին, օջախին,
 Քո թեւովոր, անմահ, անգին,
 Հուր հրեղեն բուռակին:

Եվ հյուրերը վերավորված, ալիոժ,
 Փսփսուկով ու կեղծ սուգով եկան առն:
 Ալու սրտում բուն է զրեւ մի սև օձ,
 Դեմքից փախել ժպիտ, ծիծաղ, խնդուխյուն,
 Մոնչում է արնածարավ, կատաղած,
 Թալ հոնքերից երկու վիշապ կախ արած:

— Չար Հասանը դիտմամբ սարքեց
 Այս թակարդը խորամանկ,
 Որ թանկագին հյուրերին մեջ
 Ինձ անի խողք-խայտառակ,
 Ո՞վ գիտե, թե ո՞ր թշնամու
 Զեռքից է նա կաշառվել,
 Քեզ,—նամարդ-շուն, քեզ, աննամուս,
 Պետք է ողջ-ողջ խորովել,
 Կուրացրեք այդ վհուկին,
 Նա արեին արժան չի,
 Դեերին է ծախել հոգին,
 Այդ ճորտ, ստոր գյուղացին,
 Ինձ փրկեցեք այդ անօրեն
 Խաբեբայից, սատանից,
 «Հրեղենին» տվեք իրեն,
 Դուրս քշեցեք իմ տանից:

Հրամանը մահից խիտ էր ու դաժան,
 Եվ ոչ մի մարդ չհանդգնեց քիչ մեղմել:
 Ինչ ես չմեկ, չարածճի Ուռուշան,
 Տես՝ ուզում են Ամուկ աչքերը հանել:
 Եկավ դահիճն արնակարմիր շորերով,
 Ապստամբի բեղի ծայրը շոյելով:

Թիկնապահներն ակնթարթում մտեցան
Շշմած Ամու ձեռք ու ոտքը կապեցին.
Ծոված մեջքը ու մազերը ցլերուցան
Անգթորեն քարոտ գետնին զարկեցին,
Կրակ արին ու կրակում բոցավառ
Դրին երկու երկաթեղեն բարակ լար:
Գետնաթափալ, փռելնով ձերուներն
Դիմեց փաշին ազաշանքով սրտակեղ.

— Ոյ Ալի փաշա, լսիր իմ ձայնին,
Ստնակոխ արված՝ ես զիմում եմ քեզ:
Բեզ ծառայել եմ քառասուն տարի,
Եվ ծերացել եմ քո շեն օջախում,
Եղել եմ անբիծ ու հավատարիմ,
Ինչպես վայել է իսկական մարդուն:
Ես քո ձեռքին սիրել եմ այնքան,
Ինչքան սիրել են իմ Ուռուշանին,
Եվ դու ես հղել իմ տերն. ու արքան,
Իմ բարեկամը և ոչ թշնամին:
Ու ահա այսօր քո դատաստանի
Առաջն եմ կանգնած, թագավոր արդար:
Ազաշում եմ քեզ, մորթիլը, սպանիլը,
Բայց ինձ մի զրկի արևից անմար:
Անարե, անույս չեմ ուզում ապրել...
Կարծես երկնքում բախվեցին ամպեր:
Որոտաց Ալին ժանտ ու շահթալից.
— Այդ շան աչքերը հանել բներից:

Եվ դահլիճը լարը հանեց կրակից,
Խրեց Ամու աչքերի մեջ սևաթույր,
Ամին զգաց մահասարսուռ մի կսկիծ
Ու մոռնաց ինչպես մորթվող ահեղ ցուլ:

Նաժիշաները սրտակոտոր սգացին,
Հոտաղնեքը, ծառաները լաց հղան,
Ուռուշանը գտավ կտրուկ մի կացին,
Դահճի վրա գրոհեց, բայց... զեմն առան:
Հասանն ինչպես որդեկորույս մի հովազ
Նլավ տեղից, կանգնեց ահեղ ու գոռաց.

— Լսեք, մարդիկ, քույրեր, մայրեր,
Հասան Ամու անեծքին,
Իմ աչքերի լույսն է մարել,

Բայց չի մեռել իմ հողին:
 Անխժում եմ հողումս խորքից
 Ալի փաշին անարդար,
 Նրա տնից, հարկի տակից,
 Ծուխ-մուխ չենի հաղար դար,
 Նրա դաշտում կյանք չձողկի,
 Այդում չաճի ոչ մի ծառ,
 Նրա սիրտը անվերջ ծակի
 Վշտի սուրը սրածայր:
 Լսով լսիք, թե, աղիզ Ռուշան,
 Ինչ է ասում քո ամին,
 Այսուհետև Ալի փաշան
 Մեր դուշմանն է, թշնամին:
 Նամարդի հետ նամարդ ելիր,
 Զխնայես ոչ սքի,
 Թե չէ մի օր բախտիս ուխտը
 Քո դռանն էլ կշփել:
 Բառսուն տարի ծառայեցի
 Հավատարիմ, անարատ,
 Բայց տես աչքերս հանեցին,
 Սա թող լինի քեզ խրատ:
 Անեժք, անեժք մեր փաշային,
 Փաշաներին մարդագել,
 Անեժք նրանց հրեշային
 Ժառանգներին մարդակեր...

12.

Հրամանը անողոք էր ու անխախտ.
 Հենց նույն գիշեր Ամուն տանից դուրս արին
 Ու դեմ առավ ձիագետը տարաբախտ
 Մենակության, աղքատության մեծ սարին,
 Նրա հողում ցասման գետը հորդացավ
 Եվ մտրուկին, աղին առավ հեռացավ...

Ե Ր Ա Ձ

ՀԱՄԱՆՈՒՆ ՊՈԵՄԻ «ՎԵՐՋԵՐԳԸ»

Անդրբլիզի գիշեր է: Բնել է Արան,
Եվ խոր քնի մեջ մի անուշ երազ
Ստած թեքերին՝ տանում է նրան
Հեռու-հեռավոր բարձունքներն անհաս:

Ելնում են դեմը վայրերը ծանոթ,
Սիվաճա սարը, լիճը Բղնուհի,
Ահա կանգնել է բարդիների մոտ
Մի նորակերտ շենք՝ օջախն հայրենի:

Նայում է Արան ու չի հագնում,
Արդյոք աչքերը չեն խաբում նրան,
Բայց տհա մայրն է տան շեմքին կանգնում՝
Բաղցր ժպիտով գրկած լույս Թոռան:

Իր երազի հեա քաղաքն է շրջում,
Թաղեթաղ անցնում Արան հմայված,
Շուրթերն քնի մեջ ջուր են մըմնջում,
Ճակատին կարծես կրակ է վառված:

Մթթե ոտ իրենց քաղաքն է անանկ:
Ինչ կախարդական վերածնություն,
Այստեղ հանգչում էր մի խորխուր տնակ,
Հիմա քաղմել է մի փառահեղ տուն:

Եվ շենքեր անվերջ՝ ճերմակ, լուսազարդ,
Սղջիկներ գեղաչ, մանուկներ վճիռ,
Ամեն տան դիմաց՝ այգի վարդաշառ,
Ուր շատրվանն է երգում կենսախինդ:

Առաջին օրն է զնգուն մայիսի,
Վաղերի բույրը քաղաքն է բռնել,
Ու համառոտ ծովերը լույսի
Ծիսում են՝ հագած դյուխակա՛ն գույներ:

Հաղթական զարնան այգը սրտաթուփ
Ոսկեզարդում է գահը լեռները,
Վանառոսպի վրա բացվում է խինդով
Առավոտն՝ անհուն հմայքներով լի:

Աշխուժանում են փողոցներն անծայր,
Ալ-զըրոշներն են շենքերը զուգել,
Ու ամենուրեք ցնծությամբ պայծառ
Հնչում են, կանչում մաքառման երգեր:

Շքերթ է շքեղ, մայիսյան շքերթ,
Դալիա են անվերջ շարքեր զարդարուն,
Ջահեյներ, ծերեր՝ հաղթ ու թիկնավա,
Աղջիկներ՝ որպես կենսահորդ զարուն:

Հիշում է Արան Այստեղ էր, ահա,
Որ դաբբին հորը մի օր մորթեցին,
Այնտեղ հաղթորեն կանգնել է հիմա
Փառքով պսակված հայոց այրուձին:

Ինքն է, այդ ինքն է զորքի առաջին,
Կրծքին՝ ոսկեհուռ ասաղեք քաջության,
Հեծած սևաթույր արևաշյա ձին՝
Սպասումի մեջ կանգնել է անձայն:

Շքերթն սկսվեց: Գնում է Արան՝
Հոգում խնդության բողավառ կրակ,
Պարոյ նժույգը հանում է նրան
Արևապայծառ մի լայն հրապարակ:

Նայում է Արան, և ինչ հիացմունք,
Այնտեղ զինվորի կեցվածքով հատու,
Որպես հավերժի աստղափառ բարձունք,
Վեր է խոյանում արձանն այն մարդու,

Որի ժպիտը, աչքերը պայծառ
Այնքան ծանոթ են, այնքան մտերիմ,
Նա դեկակալն է մեր մեծահանճար՝
Հայացքը հառած հայոց լեռներին:

Անցնում է Արան արձանի մոտով,
Ծաղկի անձրև են մազում շորս կողմից
Այնքան հարազատ, այնքան հոգեթող,
Որ լաց է լինում նա ցնծությունից:

Շքերթից հեռո, տոնախմբության
Լույսերն են ծփում՝ երփներանգ ու պերճ,
Լսվում են երգեր, ծափեր ցնծության
Բզնունյաց ծովի ալիքների մեջ:

Աղջիկ ու տղա նավակներ նստած՝
Լողում են ծովում մինչև ուշ գիշեր.
Համբույր են տալիս, համբուրվում սրտանց,
Եվ ըմպում կյանքից թե վայելք, թե սեր...

Հանկարծ լսվում է բախումը դռան,
Երազ-սլալատը փլչում է անհետ,
Բացվում է դուռը և... զարթնած Արան
Համբուրվում է հին ընկերների հետ:

Բայց այդ երազը գիշեր ու ցերեկ
Յայրում է, շնչում Արայի սրտում,
Կախարդիչ՝ ինչպես հավերժական երգ
Անմոռաց՝ ինչպես սրբազան երգում:

ԵՂԲԱՅՐՈՒԹՅՈՒՆ

1.

Երեք ընկեր էին նրանք,
Սիրով կապված ու սրտակից,
Եկել էին Կարմիր Բանակ՝
Ամեն մեկը մի աշխարհից։

Մեկն եկել էր Արարատյան
Արևաշող անդամաճից,
Նրա խոհուն ճակատը լայն՝
Ամռան երկինք էր աստղակից։

Մեկն եկել էր Կապրեկ սարի
Բուրուճնավեռ բարձունքներից,
Բարկ էր կրակն իր աչքերի
Օգոստոսյան արեգակից։

Մեկն եկել էր Կասպիական
Կապույտաչյա ծովի ափից,
Դեմքին ժպիտը մանկական,
Սիրան առյուծի, հոգին՝ անրիճ։

Երեք ընկեր էին նրանք —
Շոթյան, Արան ու Արզուման,
Մեկն մեկը իր կրճերի տակ
Մի սիրտ ունեւ՝ աշխարհից լայն։

2.

Աշնան դիշեր է մթամած,
Վառողաբույր, դարհուր դիշեր,
Պատերազմի դաշտն է դիմաց,
Հեռվում՝ անվերջ վառվող գյուղեր։

Եվ խավարում ընդդեմ իրար
Դիբբե են մտել երկու բանակ,
Անհաշտելի երկու աշխարհ,—
Մեկը՝ խավար, մեկն՝ արեգակ...

Շուրջը՝ մութի անհուն օվկիան,
Վերեն աստղերը բոցկլառն,
Շոթան, Արան ու Արդուլան
Մտրի թևով գնում են առն:

3.

Արան այսօր կռից առաջ
Հիշում է մի վառ տեսարան.
Փոքրիկ աղջկան իր գիրկն առած՝
Նստել էր նա իրենց դռան:

Դեմից կենն էր նայում ժպտուն,
Թաղ էր անում տղան կողքին,
Երեկո էր, գալիս էր առն
Գյուղի նախիւրը խնդագին:

Խաղ էր անում տղան անրիժ,
Ու ննջում էր դուստրը գրկում,
Նրան թվում էր՝ իրենից
Երջանիկ մարդ չիք աշխարհքում...

4.

Մայրն է այսօր Արդուլային
Հեռուններից այցելեկել,
Եկել է ու կարոտագին
Իր մինուճար որդուն գրկել:

Գուրգուրում է, սեղմում կրծքին,
Համբուրում է անհագ, անվերջ,
Ու գրկվում են կրկին, կրկին,
Բայց չի մաշում կարոտն անշեջ:

Ձի տրանջում մայրն ալեգարդ,
Սրտապնդում է իր որդուն.
«Լավ է ապրել մի օր ազատ,
Քան հազար դար՝ անյուշս բանտում:

Իմ կյանք-արև, իմ Աբղուլա,
Վախ չունենաս երբեք մարտում,
Թող քո սուրբ միշտ շողջողա,
Որ հաղթությամբ հաղաճես տունս:

Ու նստում են իրար կողքի
Զբուցում են երկնք, երկնք,
Հանկարծ... երազ էր մարտիկի,
Զարթնեց տղան, մայրը չկար:

5.

Պառկել է լուռ գինձոր Շոթան,
Խորասուզված իր խոհերում,
Հին հուշերի շողուն շղթան
Նրան տանում է շատ հեռուն...

Առավոտ էր գարնանային,
Ծիծաղում էր աշխարհ-արար,
Սարից խաղավ իջնում էին
Առվակները մշառավարու:

Ծիծաղուն ծաղկունքը ցնծազին
Հեղեղել էր սար, ձոր ու արա,
Շոթան հենված էր մահակին՝
Այգաբացն էր դիտում անթարթ:

Հանկարծ ինչպես երկշոտ կոնիկ,
Զորից ելավ մի հուր-հրաշք,
Համփա ալկին ծիլ ու ծաղիկ,
Ծափ գարկեցին առա, առվակ:

Ու փնջելով ծաղկունք պեռ-պեռ,
Մեղմ շոյելով դառնուկներին,
Եկավ, եկավ և՛ ժպտերես,
Ե՛վ դաթական, և՛ մտերիմ:

Հրաշք էր այդ, անուշ հեքիաթ
Թե՛ լուսավոր մի վառ տեսիլք,
Հովվի գլմաց կանգնած զվարթ
Ժպտում էր մի անուշ աղջիկ:

Ու կանաչի թավշյա դորդին
Նստեց Շոթան. Բեթոյի հետ.
Գլուխն դրած աղջկա կրճքին՝
Ապրեց ժամեր իրանովետ:

Եվ օրըսդան ուխտ կապեցին՝
Հավատարիմ Ջնալ մինչ մահ.
Բայց... շփոթները հնչեցին,
Կովի պիտի գնալ հիմա:

Դրոճում էր սոսիւր նենդ՝
Կարմիրները դերբի վրա:
Կար մի բլրակ, բլրակին լեբկ՝
Շոթան, Արան ու Աբդուլլան:

Նրանք իրենց թնդանոթից
Թափում էին հրե հեղեղ
Ու հարդանոս սև վառողից
Մնվում էին ամպերն անեղ:

Արկ մատուցողն էր Աբդուլլան,
Հովիվ Շոթան նշանառուն,
Կրակողն էր Ջանեկ Արան՝
Դարնան դեպի պես վարարուն:

Հուրն ու սուրը չէին սարսում
Դյուցազնական այն երեքին,
Նրանց արկի շանթն էր կալում
Ոսոխի դորքը մոլեղին:

Կովի դաշտերը սևացան
Թշնամական դիակներէց.
Ամենուրեք՝ մեռնողի ձայն,
Բայց գալիս են, գալիս նորից:

— Աղիդ Արա, Աբդուլլա Ջան,
Կարծ լինեք,—ասաց Շոթան,—
Լավ է՝ մեռնել քաջի նման,
Բան կենդանի՝ վղին շղթա:

— Անվախ նայենք մահվան աչքին,
Մահը մեզնից թող վախենա,
Ով կյանքը առ հայրենիքին,
Նա հերոս է, անմահ է նա,—

Ասաց Աբղուլը քաջագուն
Ու սրընթաց գնաց արևի...
Կատաղում էր ու դադաղում
Վիշապ-սասիլը զայրագին

— Հերոսի պես մեռնենք, աղերք
Գաստեղլոյին հիշենք հավետ,
Նրա կյանքը դարձել է երգ,—
Ասաց Արան ու նայեց ետ

Նայեց, ավաղ, արևը ձեռքին՝
Զարկված ընկել էր Աբղուլան,
Ճակատին բացված՝ վերքն ահագին
Կարմիր՝ նման կրկնած նստն

Ոստնեց Արան, հասավ նրան,
Զարկեցրակը առավ ձեռքում,
Լուռ էր հայացքը հուրհրան,
Բոցավառ սիրտը չէր զարկում...

Վերջին անգամ համբուրեց նա
Իր ընկերոջ աչքերն առողոտ,
Ու արկն առած՝ ցատամբ դժնյա,
Հորձանք տվեց մարտկոցի մոտ...

Եվ ի՞նչ սարսափ, Շոթան ընկած՝
Մահանում էր անբուժ վերքից,
Թշնամիները մոլեգնած՝
Թափվում էին ամեն կողմից

Ակնթարթում նա ընկերոջ
Հասավ, զրկեց, համբուրվեցին,
Ինչպես մթնում շողացող բոց՝
Հանդավ Շոթան դուրացագնածին

Արան հողին զրկեց հանդարտ
Իր ընկերոջ մարմինն անգին,
Եվ մեռ-մեռակ, հագով հղարտ
Պարխալ կանգնեց ընդդեմ գորբին

Ինքն էր մենակ արկեք բերում,
Նշան բռնում ախոյանին,
Ինքն էր «կրակ» հրամայում,
Եվ կրակում էր զայրագին

Կրակում էր Արան ցատկոտ,
Բայց, ախ, մնաց արկը վերջին,
Շուրջը՝ դեբը մահանոտ,
Մարդակեր—մարդը առաջին:

Զի՛, թնդանոթը թշնամուն
Նոտ անվթար չի տա երբեք,
Կողքի բահին է մոռենում
Պողպատակուռ, ջլուռ մի ձեռք:

Գետին խրվեց բահը ուժգին,
Ու կոշտացած հողով լեռնվեց,
Գետին խրվեց, ելավ կրկին,
Հրանոթի փողը լցվեց:

Արան վերջին արկը դրեց
Եվ կրակեց վերջին անգամ,
Հրանոթը ճիչով ճայթեց,
Պայթեց մարտի անեղ արքան:

Հեղեղվեցին քաջի վրա
Թշնամիները կատաղած
Բայց նռնակը սուրաց նրա,
Ոտի տակի հողը դողաց:

Այնքան նեղեր դժոխք ճամփեց
Քաջի նռնակը մահատու,
Բլբին տիրեց լուսթյուն մեծ,
Հանգան ձիչերը չարաթույն:

Բայց, ախ, ընկավ իրա զարկով
Ինքն էլ, Արան քաջատիտան,
Ու մեռնելիս՝ դոչեց երգով.
«Փառք մեր կովին, մեր հաղթության»:

6.

Երեք ընկեր էին նրանք՝
Հավետ կապված սիրով անմար,
Տղին և՛ սիրտ, և՛ սեր, և՛ կյանք
Հայրենիքի փառքի համար:

Կ Տ Ա Կ

Մահանում էր բաղմավատաւ բանաստեղծը ծերունի,
 Պահճի շուրջը բաղմեւ էին երկրի տերերն անձանի,
 Լուսիսունը այնքան խորն էր տիրակալում դահլիճում,
 Որ լսվում էր, թե նորարաց վարդը ինչպես է շնչում:
 Երկիրն-տրաք սպասում էր բանաստեղծի կտակին,
 Բայց նա աչքերն անխոս փակեց ու համբալցով մեծ հողին...

• • • • •
 Երբ տուն դարձան գերեզմանից՝ մաքրելի նրա բարձի տակ
 Գտան մի թուղթ՝ վրան այսպես ձեռագրված մի կտակ.

«Երբ սիրեցեք Լյանքից, գինուց, ամեն բանից ավելի,
 Երբն է միակ բալասանը անդնդախոր ցավերի,
 Երբ հյուսեցեք, առանց երգի վիշտն աշխարհը կավերի»:

Բ Ո Վ Ս Ն Դ Ս Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԵՐԳ ՓԱՌԻԻ ՈՒ ՅՆՊՈՒՓՅԱՆ

	Էջ
Հոկտեմբեր	3
Նոյեմբեր	4
Հայրենիք	6
Երգ փառքի ու ցնծութեան	8
Երևան	10
Դու անհոգ խաղա	11
Հայաստան	12
Խնջույքի երգ	14
Մարտիրոս Սարյան	15
Երգի ծնունդը	17
Յնծան, երկիր	18
Հայաստանին	19
Կովսեանք ընկալ	20
Համբուրգի հասկեր	21
Հայոց համփան	22
Իմ հայրենի աղջիկները	23
Գալիանի երգ	24
Ինչու չես գալիս տուն	25
Բուլքու	26
Մայիսյան երգ	27
Կամիտաս	28
Հայոց աշխարհ	30
Շանապարհին	31
Ռուս մեծ աղջիկ կենացը	32
Մոսկովա	33
Սևան	34
Երջանկութեան աղբյուր	35
Խրաշմանքի երգ	36
Երգ հնգամյակի	37
Հաղթանակի կամուրջը	38
Հայրենի հանդուժ	39
Մանկութեան	40

Վերածնունդ	41
Որդին	43
Թոռնիկի համար	44
Յնծության երգ	45
Օրոր	46
Սիրտ	47
Երանություն	48
Հաղթանակի երգ	49
Դարունն ու ես	
Խոհ	51
Տոնական գիշեր	52
Ստալինյան սրբոտան	55
Հերոսասպասում	57
Դովք	59
Հովվի աղբյուրը	60
Արագիլներ	61
Սևան քաղաք	62
Սպասում	61
Լեռնաշխարհում	65
Երգ հայրենիքի մասին	67
Սեր	68

ԵՐԱՆԿՈՒԹՅԱՆ ԾԱՂԻԿՆԵՐ

Երգ մանուկների մասին	73
Դադիլ մանկության	74
Խաղընկերս	75
Մանկիկս	76
Փաթիլների տակ	77
Արտաիկը	78
Պապն ու թուր	80
Տանածառ	81
Երկու մանուկ	82
Ծառն ու մանկիկը	83
Կարոտ	84
Վայելք	85

ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ

Սրտի ձայնով	89
Հայրենազարձ մանուկներին	90
Հրազդանի եզերքին	91
Պանդուխտ հայի մատրմունքը	92
Մորս գերեզմանը	93

Քաղաք	94
Եւրոպական երկ	95
Արարատ	96

Պ Ո Ն Մ Ն Ե Ր

Քյոտ-օղլի	99
Նրալ	113
Նդրալուքյուն	116
Կոտի	122



Խմբագիր՝ Ն. ԶԱՐՅԱՆ


Կազմը, տխուր տարերը և շուրջ-տխուրները
նկարիչ՝ ՀՐ. ՌՈՒՆԿՅԱՆԻ


Տեխ. խմբագիր՝ Ա. ՄԱՏԻՆՅԱՆ

Վ.Ֆ 04304. Պատվեր 466. Տիրաժ 3000.
Տպագր. 7³/₄ մամ., հեղինակային 4,2 մամ.
Հանձնված է արտադր. 1/X 1947 թ.
Ստորագր. է տպագր. 20/XI 1947 թ.

ՀՍՍՌ Մինիստրների Սովետին
Կից Պոլիգրաֆի և Հրատ. Վարչ.
№ 3 տպարան, Երևան,
Արավերդյան 65,
1947 թ.








Հովիտ Բերքան
Առաջադրանքներ
ՏԺ ուղղությամբ
30 ամյակին

ԳԱԱ Հիմնարար Գիտ. գրադ.



220029447

10¢.



II
29447